



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՂԹԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ Հ. 4




Ա. Պ. Զ. Գ. Ե. Բ. Ե. Վ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ  
ԿՈՂԹԵՐԱՏԻՎԻԱՅԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՅԿՈՈԹԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1929





Ա. ՊՈԶԴԵԽԵՎ

ԲԱՆԿՈՐԱԿԱՆ  
ԿՈՂՊԵՐԱՑԻԱՑԻ  
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՓԻ  
ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

ՏԵՐՄԵՑ  
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅԱՆ,  
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29  
ԳՐԱՌԵՊ. № 2045բ.  
ՏԻՐԱԺ 1500

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ

Բանվորական կոռպերացիայի հաշվետու  
վերընտրական կամպանիան կոռպերացիայի նը-  
գաճումների, թերությունների ու հետագա զար-  
դացման միջոցների դլխավոր զորատեսը պետք  
է լինի. Կամպանիան պետք ե անցկացվի՝ աշ-  
խատանքի արդյունքները մասսայականորեն ըս-  
տուգելու, կոռպերատիվ ապարատում յեղած  
բազմաթիվ վնասները մասսայականորեն քննա-  
դատության յենթարկելու նշանաբանի տակ:  
Կամպանիան վոչ պակաս չափով պետք ե անց-  
կացվի այն դժվարությունները լայն կերպով  
յերեան բերելու նշանաբանի տակ, վորոնց հան-  
դիպում ե կոռպերացիան իր աշխատանքի աս-  
պարիզում, և այն բարդ ու պատասխանատու  
խնդիրների, վոր ծառանում են կոռպերացիայի  
առաջ:

Ամենից առաջ, անցած ճանապարհի լուրջ  
գնահատական ե հարկավոր:

Վերջին տարիները և, մասնավորապես, ան-  
ցած անտեսական տարին աչքի ընկան բանվո-

բական կոռպերացիայի խոշոր հաջողություններով։ Բանվորական կոռպերացիան վոչ միայն հաղթահարեց իր տնտեսական ու կաղմակերպական անդորությունը, այլև շատ առաջ անցավ—այժմ կոռպերացիան ալ զյունարերական ալլրանքների գլխավոր հաղորդիչն եւ դարձել արդյունարերական ալլրանքների ու քաղաքի սպառողի միջև ու միաժամանակ ընդարձակել եւ իր աշխատանքները՝ ընակչությանը զյուղատնտեսական մթերքներ մատակարարելու ասպարիզում։

Այդ ժամանակամիջոցում աճել եւ նաև բանվորական կոռպերացիայի սլատասխանատվությունը՝ բանվորության մատակարարման զործի վիճակի համար։ Այս հանգամանքը հետեւանք է կոռպերացիայի նշանակության աճման՝ քաղաքի բանվոր ընակչության կարիքները բավարարելու ասպարիզում։ Իրեն հարկավոր ալլրանքների մեծ մասը բանվորն այժմ կոռպերատիվից են գնում։ այս պատճառով չափազանց բարձրացել եւ ընակչության շահագրգուվածությունը դեպի բանվորական կոռպերացիայի գործունեյությունը։ Այժմ բանվորն ավելի պահանջկոտ վերաբերմունք ունի դեպի կոռպերատիվ աշխատանքը, վորովհետեւ դիտե, վոր վերջնի վորակից եւ կախված իր նյութական շահերը բավարարե-

լու աստիճանը, առաջին հերթին՝ իր վաստակի  
ույշալ մակարդակը:

Բոլոր այս հանգամանքները բարդացըրել են  
բանվորական կոռպերացիայի անելիքները։ Բան-  
վորական կոռպերատիմներն ամբողջ հասակով  
իրենց առաջ պետք ե դնելին՝ իրենց ծախած  
ապրանքների տեսակը (չեշուղ) ընդարձակելու,  
բանվորների փոփոխակի պահանջների հետ տե-  
սակը հարմարեցնելու, առետրական ցանցը ճիշտ  
կերպով տեղակարգութ, առետրական աշխատան-  
քի տեխնիկան բարելավելու, այս աշխատանքի  
մեջ կուլտուրական սկզբունքներ մտցնելու,  
կենցաղային պահանջների սպասարկումն ուժե-  
ղացնելու, առետրական գործի սպասարկու-  
թյունների արժեքն եժանացնելու խնդիրները։  
Այս բոլորը պահանջում եր՝ կոռպերատիմների  
վողջ աշխատանքը հիմնել հասարակական լայն  
բազայի վրա այնպես, վոր կոռպերատիվի վողջ  
գործունեյությունը կատարվի փայտերերի ան-  
միջական մասնակցությամբ և անպատճառ նը-  
րանց հսկողությամբ։

Արհեստակցական միությունների դեռ VII  
համագումարի կողմից հաստատված այս խըն-  
դիրները կատարելու նշանաբանի տակ ել ըն-  
թացել ե բանվորական կոռպերացիայի գործու-  
նեյությունը վերջին յերեք տարում։

Թեակոխելով նոր հաշվետու-վերընտրական-  
կամպանիա, մենք հարց պետք եւ տանք մեզ-  
բա ի՞նչ չափով ենք գլուխ բերել վերոհիշյալ  
խնդիրները, ի՞նչ ենք արել արդեն և ի՞նչ ե-  
մնում անելու բանվոր սպառողի մաքսիմալ պա-  
հանջները բավարարելու համար:

Կոռպերատիվի ամեն մի աշխատակից ու-  
փայտեր-ակտիվիստ, բանվոր դասակարգի պա-  
հանջների խիստ հաշվառման վրա հիմնված-  
գործունեյության հստակ ծրագիր պետք եւ ու-  
նենա: Կոռպերատիվ կոլեկտիվի կամքն ու-  
ստեղծագործ եներգիան ամրացնելով մեր պրակ-  
տիկայի կարևորագույն հարցերի շուրջը՝ մենք  
հնարավորություն կունենանք իսկապես բարելա-  
վելու մեր աշխատանքը:

Կարելի յե առանց կասկածելու պնդել, վոր-  
չնայած մեր աշխատանքներին ընթացակցող  
լուրջ դժվարություններին, չնայած շուկայի  
ամենաբարդ հանգամանքներին, բանվորական-  
կոռպերատիվ անցյալ շրջանի ընթացքում ու-  
ժեղացրել եւ իր կապը մասսաների հետ, ու-  
ժեղացրել եւ իր դերը բանվորական ընտանիքի-  
բյուջեն ընդգրկելու գործում:

Այդ ժամանակամիջոցում կոռպերացիան-  
վոչ միայն գների զգալի իջեցում եւ կատարել-  
այլի, չնայած շուկայում գոյյություն ունեցող

մի շարք դժվարությունների, կազողացել ե ի-  
շեցրած մակարդակի վրա պահել իր առևտրա-  
միջնորդական սպասարկությունների արժեքը։

Իր ապրանքները մասնավորից 20—25 տո-  
կոս եժան ծախելով՝ բանվորական կոռպերատի-  
վը վոչ թե խոսքով, այլ գործով բանվոր դասա-  
կարգի համար հարյուրավոր միլիոն ռուբլիներ  
ե խնայում։

Անցնելով կատարած աշխատանքների ընու-  
թագրմանն ու անցած շրջանի նվաճումների գը-  
նահատմանը, ամենից առաջ պետք ե կանգ առ-  
նենք անցյալ շրջանի առևտրական աշխատանքի  
առանձնահատուկ գծերի վրա։ Առաջին հերթին,  
կանգ առնենք կազմակերպական կարգի յերե-  
վույթների վրա։

Առաջին՝ այդ ժամանակամիջոցում բանվո-  
րական կոռպերացիան, ինչպես և սպառողական  
կոռպերացիայի վողջ սիստեմը, կարգավորել ու  
ամրապնդել ե առեվտրական փոխարարեցու-  
րյունները մեր սոցիալիստական արդյունաբե-  
րության հետ։ Այժմ բանվորական կոռպերացիան  
արդյունաբերական մեկ ապրանքի նկատմամբ՝  
գրեթե բացառիկ, իսկ մյուսի նկատմամբ՝ ամե-  
նագլխավոր, հաղորդիչն ե հանդիսանում քաղա-  
քի սպառողին։ Այս բանին ոգնել ե արդյունա-  
բերության հետ ունեցած փոխհարաբերություն-

ների մեջ կիրառվող գլխավոր պայմանագրերի  
սիստեմը:

Պետարդյունարերության հետ կնքած գըլ-  
խավոր պայմանագրերը կոռպերացիային հնարա-  
գորություն են տալիս իր վրա հաստատելու  
շուկայի վողջ մթերքների գլխավոր մասսանց  
Այս պայմանագրերը կոռպերացիայի աշխատանք-  
ները կայուն բաղայի վրա յեն դնում:

Այս պայմանագրերի պրակտիկան բարենը-  
պաստ ազդեցություն ունեցավ նաև բանվորա-  
կան կոռպերատիվների մթերման սիստեմի վրա:  
Այդ պրակտիկան ուժեղացրեց կոռպերատիվնե-  
րի առևտրական կապը բանվորական կոռպե-  
րացիայի կենտրոնի—կենտրանսեկցիայի հետ,  
վարը հնարավորություն ազեց կոռպերատիվներին  
անհրաժեշտ ազրանքներն ավելի եժան ճանա-  
պարհով ստանալ անմիջականորեն կենտրոնից,  
մի կողմ թողնելով միջանկալ ողակները:

Վերջապես, գլխավոր պայմանագրերի սիս-  
տեմը ծրագրայնություն մտցրեց ազրանքների  
իսկ բաշխման գործի մեջ. Մինչդեռ առաջ ապ-  
րանքներն առաջին հերթին ու ավելի մեծ չա-  
փով հասնում ենին ավելի հարուստ, ֆինանսա-  
պես ուժեղ կոռպերատիվներին, գլխավոր պայ-  
մանագրերի սիստեմը վերացրեց այս յերևույթը՝  
սահմանելով ազրանքների հավասարաչափ բաշ-

խում վողջ ցանցի վըա ու, հետեապես, նաև  
մեր յերկրի բանվոր բնակչության ամեն մի կա-  
տեղորիայի վրա:

Ապա՝ պետարդյունաբերության հետ ու-  
նեցած փոխհարաբերությունների պրակտիկայի  
մեջ անցյալ ժամանակաշրջանի ընթացքում  
տացվել ե, այսպես առաջ՝ վաղորոք պատվերնե-  
րի սիստեմ, վոր կոռպերացիային իրավունք ե  
տալիս իրեն համար անհրաժեշտ ապրանքների  
պատվեր տալու արդյունաբերությանը: Թեև այս  
սիստեմն այժմ անկվածային ապրանքների վրա  
յե տարածվում, սակայն այս սահմաններում ել  
մեծ ոգուտ ե տալիս այն, հարմարեցնելով մեր  
անկվածային ֆաբրիկների արտադրանքը բան-  
վոր սպառողի պահանջներին:

Բանվորական կոռպերացիայի առետրական  
աշխատանքի յերրորդ առանձնահատկությունը  
վորոշվում ե պակաս ապրանքների բաշխման  
համար կենտրանսեկցիայի կողմից սահմանված  
պրակտիկայով: Առաջին հերթին և ուռավելա-  
դույն չափով կենտրանսեկցիան ապահովում է  
այն կոռպերատիմները, վորոնք սպառաբեկում են  
մեր յերկրի գլխավոր արդյունաբերական շրջան-  
ները, հաշվի առնելով այս շրջաններից ամեն  
մեկի տեսակարար կշիռն ու նշանակությունը:  
Կարևորագույն ապրանքների բաշխման այս կար-

գը 25% հատուկ հավելում և սահմանում այն հիմնական մասի վրա, վոր մետաղագործների, լեռնագործների, մանածագործների ու քիմիագործների կոռպերատիվներին և հասնում և 15% այն մասի վրա, վոր մյուս ինդուստրիալ միությունների (փայտամշակման, կաշեգործների, շաքարագործների և այլն) անդամների կարիքներն սպասարկող կոռպերատիվներին և հասնում:

Բաշխման այսպիսի կարգի հետևանքը յեղավ այն, վոր կենտրանսեկցիան առաջ բերեց այնպիսի մի դրություն, վոր պակաս ապրանքներն առաջին հերթին հասնում եյին գլխավորարդյունաբերական շրջանների բանվորներին,

Բաշխման այս սիստեմն իր նշանակությունը կպահպանի միայն բանվոր բնակչության համար անհրաժեշտ ու գլխավոր ապրանքների պակասի պայմաններում։ Այս սիստեմի սուրկարիքն ավելի ու ավելի կմեղմանա ապրանքային դժվարությունները լուծարքի յենթարկելու չափով։ Քանի դեռ այս դժվարությունները չեն վերացել, այս սիստեմը բանվորական կոռպերացիային ամբողջությամբ պետք է։ Հնայած վոր բարենպաստ կերպով չի անդրադառնում, այսպես կոչված՝ վհչ ինդուստրիալ բանկոպների վրա. այսինքն՝ այն կոռպերատիվների, վո-

բոնք քաղաքի խառը բնակչությանն են սպասարկում։

Ապրանքային դժվարությունները և բանվորության մատակարարման գործում այս դըժվարություններով պայմանավորված ընդհատումներն անցյալ ժամանակաշրջանի ընթացքում ռւժեղ ազդեցություն են ունեցել և այժմ ել ունեն կոռպերացիայի աշխատանքների վրա։

Այս դժվարությունների գլխավոր պատճառները հանրածանոթ են. վերոհիշյալ պատճառները գլխավորապես այն են, վոր արդյունաբերական ապրանքների արտադրության ծավալումն ու այս ապրանքների պահանջի աճումներար չեն համապատասխանում։ Պահանջի ու առաջարկի միջև շուկայում գոյություն ունեցող տարբերությունը սրվում ենաև մեր յերկրի հիմնական շինարարությամբ։ Այս շինարարության մեջ այժմ շինարարական բանվորների նորանոր զանգվածներ են ներգրավվում։ Արտադրության ու շինարարության մեջ զբաղված բանվորների թիվը տարեց տարի աճում ե։ Բանվորների քանակական աճումը, բնականարար, ավելացնում ե արդյունաբերական ապրանքների շուկայի պահանջը, այնինչ ակներեւ ե, վոր հիմնական շինարարությունն ինքն անհապաղ շրավելացնում շրջանառու ապրանքների մասսան։

ու գերջիններս կավելացնի միայն նոր կառուց-  
վող ֆարբիկների ու դործարանների շենքն ա-  
վարտելուց հետո. այսինքն՝ մոտավորապես  
2—3 տարուց հետո:

Բացի այդ, ոլեաք և հաշվի տոնենք, վոր  
մինչհեղափոխական ժամանակ յերկրի սեփա-  
կան արտադրության ապրանքների պակասը լը-  
ցացվում եր ապրանքների ուժեղ ներածումով  
արտասահմանից, այնինչ այժմ գերադասում  
ենք՝ պատրաստի ապրանքների փոխարեն՝ հումք  
և մանավանդ նոր ֆարբիկների ու դործարան-  
ների համար մեքենաներ ստանալը։ Վորովինետն  
մենք վոսկու մեծ ոլաշար չունենք, և արտա-  
սահմանի կապիտալիստները մեզ վարկ չեն տա-  
լիս, մենք ստիպված ենք հումքի ու մեքենա-  
ների համար ծախսել այն արժույթի մեծ մասը  
(արտասահմանյան դրամների), վոր մենք ստա-  
նում ենք արտասահման ուղարկած մեր ապ-  
րանքների վաճառքից։

Ապա՝ վորոշ ապրանքների պակասը, ինչ-  
պես այդ կարող ենք տեսնել մահուդ-բըդեղեն  
գործվածքների որինակից, սրվել ե մեր պետա-  
կան սահմանների փոփոխման պատճառով։  
ԽՍՀՄ ի սահմաններում մնացել ե այն արտադ-  
րության ընդամենը միայն  $50^{\circ}/\text{o}$  ը, վոր 1913  
թվի շաբական մուսաստանն ուներ (լոձի ու

Բելոստոկի և այլ վայրերի արդյունաբերությունը կեհաստանի ձեռքն անցնելը): Ճիշտ ե, միաժամանակ մեր Միության բնակչությունը 1913թվի համեմատությամբ մոտավորապես 20 միլիոն մարդով պական է: Սակայն, բնակչության պահանջները չտեսնված չափով աճել են. մի բան, վոր իր ահազին աճումով վոչ միայն լրացնում, այլև գերազանցում ե մինչնեղափոխական Ռուսաստանի շուկայի պահանջների չափը:

Մասսայական գործածության ավըանքների արտադրության գործի հոգատարությունը Խորհրդային պետության ամենակարևոր խնդիրներից մեկն եւ Սակայն, ամեն մեկիս հասկանալի յե, վոր շինարարության տվյալ աստիճանի վրա արտադրական միջոցների արտադրության զարգացումը (ծանր խնդուստրիայի) կարևորագույն մի խնդիր եւ: «Ծանր խնդուստրիան և արտադրական միջոցների արտադրությունը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերաշնուրական գլխավոր բանալին ե» (Համ. Կենոյեմբերյան բանաձեռքից): Վորովհետև ծանր արդյունաբերության ըստամենայնի զարգացումը նշանակում է արտադրության մեջենաների և այլ գործիքների պատրաստման ուժեղացում, վորոնք անհրաժեշտ են գյուղացիու-

թյան համար ու, հետեապես, տանում են դեպի  
թեթև ինդուստրիայի համար անհրաժեշտ հացի  
ու հումքի (վուշ, բաւրդ, բամբակ, կաշի և այլն)՝  
ուժեղացումը։ Միաժամանակ ծանր ինդուս-  
տրիայի արագ ծավալումը բացարձակ պայման է  
հանդիսանում ամենաթեթև ինդուստրիային  
արտադրական միջոցներ մատակարարելու հա-  
մար։ Պարենավորման ապրանքների, մանավանդ  
հացի ասպարիզում, առանձին տեսակի դժվա-  
րություններ մենք ունեցել ենք և այժմ ել ու-  
նենք։

Հացամթերման ասպարիզում մեր դժվարու-  
թյան գլխավոր պատճառը մեր հացահատիկային  
տնտեսության հետամնացությունն եւ Ցածր  
քերքատվություն, հողի մշակման նախնական  
ձևեր, բացառիկ կախում կլիմայական յերեսութ-  
ներից, բաժան բաժանություն, կոլեկտիվ հող-  
ոդտագործման սկզբունքների անբավարար զար-  
գացում—ահավասիկ մեր յերկրի հացահատիկա-  
յին տնտեսության առանձնահատուկ գծերը։  
Միաժամանակ պատահում ե քերքի անբարե-  
նպաստ դասավորում (մանավանդ այս տարի),  
վոր հացի մասսայական կուտակման ե հասցնում  
խուլ, հաղորդակցության ճանապարհներից հե-  
ռու շրջաններում։ Վերջապես, աչքաթող չպետք  
ե անել, վոր կուլակներն ամեն կերպ աշխա-

առում են վիժեցնել հայամթերման գործը, բացահայտ թշնամական զիրք են բռնում խորհրդային իշխանության ու նրա տնտեսական ձեռնարկումների նկատմամբ։ Այս մի կողմից Մյուս կողմից՝ քաղաքի բնակչության աճումը, նոր տասնյակ ու հարյուր հազարավոր բանվորների հոսանքը դեպի արդյունաբերական շրջաններ, քաղաքի աշխատավորության գնողունակության բարձրացումը—հացի ու այլ կենսամթերքների պահանջի չտեսնված աճման դուռ են բաց անում։ Այսպիսով առաջ են գալիս պարենավորման գժվարություններ, վորոնք, անշուշտ, ժամանակավոր բնույթ են կրում, բայց առայժմ սուր կերպով զգալ են տալիս իրենց։

Ահավասիկ այն գլխավոր յերեսույթները, վորոնք այս կամ այն չափով իրենց կնիքն են գրել մեր առևտրական վողջ գործի ու վերջինիս զարգացման վրա։

Բանվորական կոռպերացիայի առևտրական գործունեյության զարգացման գլխավոր ցուցանիշները հետևյալն են։

Բանվորական կոռպերացիայի ցըանառությունները՝ ապրանքներ վաճառելու ասպարեզում, այդ տարիների ընթացքում 1.231 միլիոն ռուբլուց (1924—25 թ.) աճել են մինչև 2.837 միլիոն ռուբլի (1926—27 թ.). անցյալ 1927—

28 թ. ընթացքում այդ շրջանառությունները նորից են ավելացել ու հսկայական գումարի հասել — 3.830 միլ. ռուբ., իսկ 1928—29 տքնաեսական տարում շրջանառությունները նկատի յեն առնվում 4.372 միլիոն ռուբլու գումարով:


Շրջանառությունների ալև աստիճան արագ աճման հետեանքը յեղավ քաղաքներում ապրող բանվորների ու ծառայողների աշխատավարձի ֆոնդի ընդդրկման զգալի ավելացումը։ Մինչդեռ, որինակ, 1924—25 տնտեսական տարում բանվորական կոռպերացիան ընդդրկում եր բանվորների ու ծառայողների աշխատավարձի ֆոնդը (առանց յերկաթուղայինների, ու գյուղատքնաեսական բանվորների աշխատավարձի) 37—39<sup>0</sup>/0-ով, այնինչ 1925—26 տնտեսական տարում այդ ընդդրկումը 44—47<sup>0</sup>/0 եր, իսկ 1926—27 տարում բարձրացավ մինչև 52<sup>0</sup>/0։ Անցյալ 1927—28 տարում բանվորական կոռպերացիան ընդդրկել եր արդեն բանվորների կողմից շուկայում իրացված աշխատավարձի 62—66<sup>0</sup>/0 ը։ Այս բանը պերճախոս կերպով ցույց ե տալիս բանվորական կոռպերացիայի խոշոր հաջողությունները։

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՍ ԲՅՈՒ-  
ՁԵՅԻ ԼՐԻՎ ԸՆԴԳՐԿՈՒՄՆ Ե

Առկայն, այս համեմատաբար մեծ հաջո-  
ղություններն այնուամենայնիվ բավարար չե-  
կարելի համարել: Աշխատավարձն ընդամենը  
 $62 - 66^{\circ} 0 \cdot 0 \text{ պ}$  ընդգրկելով, բանվորական կոռպե-  
րացիան այդպիսով ամենևին ել հնարավորու-  
թյուն չունի լրիվ ու պատշաճ ազդեցություն  
ունենալ աշխատավարձի մակարդակի վրա: Կո-  
ռպերացիայի նেանակությունն իետագւս ընդլայ-  
նումը բանվորների աշխատավարձի իրացման  
ասպարիզում, բանվորների ազատագրումը մաս-  
նավորի ծառայություններից կախումն ունե-  
նալու անհրաժեշտությունից միայն հնարավո-  
րությունն կտան այդ ասպարիզու իսկական  
հաջողությունների հասնելու:

A 3931

Կոռպերացիայի գերի հետագա մեծացումը  
բանվորների ու ծառայողների վաստակի իրաց-  
ման ասպարիզում հնարավոր ե այն դեպքում  
միայն, յերբ այնտեղ ազրանքների ընտրու-  
թյունը համապատասխանի սպառող մասսաների  
պահանջներին: Այս ասպարիզում ներկայումս  
անհամագատասխանություն ե նկատվում: Վեր-  
ջինիս պատճառն այն ե, վոր կոռպերատիվները  
դեռևս բավարար չափով չեն սպասարկում



զյուղատնեսական ապրանքների (միս, կաթ, կարտոֆիլ, բանջարեղեն) սպառողական պահանջը յեվ, յերկրորդ՝ բույլ ե այնպիսի ապրանքների առեվտուրը, ինչպիսիք են՝ կան-կարասիք, տանօր իրեր, վառելիքը, սպորտի ապրանքները, ռադիոն ու այլ բաները, վորոնի ավելի ու ավելի յեն մուտք գործում բանվորական բնակնիքի առողյա կարիքների մեջ, բայց կոռպերացիայի ապրանքաշընառության ասպարիզում դեռեվս բավարար տեղ չեն ձեռք բերել իրենց համար:

**Մանավանդ աղաղակող անհամապատասխանություն ե տիրում գյուղատնտեսական ապրանքների պահանջի ու առաջարկի գործում։ Բանվորական ընտանիքի գործածած սննդամթերքի ասպարիզում գյուղատնտեսական ապրանքներն  $89\%$  են զբաղեցվում, իսկ բանվորական կոռպերացիայի ապրանքատեսակավորման ասպարիզում  $40\%$  են տեղ զբավում։**

Յեթե ուշադրության առնենք, թե բանվորական կոռպերատիվներն ինչ չափով են բավարում ամեն մի գյուղատնտեսական ապրանքի պահանջ, ապա՝ մոտավորապես, այսպիսի մի պատկեր կստացվի. Կարտոֆիլի ասպարիզում բանվորական ընտանիքի ամեն մի շնչի համար ուարեկան միջին առքը կազմում է 4 ռ. 21 կ.,

Հսկ կոռապերատիվների կողմից տարեկան միջին  
թվով  $10,5^{\circ}/\text{o}$  և միայն բավարարվում այս։ Ուրիշ  
խոսքով՝ բանվորական ընտանիքի ամեն մի ան-  
դամ կոռապերատիվ խանութից տարվա մեջ կա-  
րողացել ե գնել միջին թվով  $44$  կոպ. կարտո-  
ֆիլ։ Կաղամբ բանվորական ընտանիքն ամեն մի  
շնչի համար, տարեկան բանեցնում ե 1 ռ. 75  
կոպ., իսկ կոռապերացիայի կողմից այս, առանց  
այն ել շնչին, պահանջը լրացվում ե ընդամենը  
 $25^{\circ}/\text{o}$  ով, իսկ մյուս  $75^{\circ}/\text{o}\cdot\text{ը}$  գեռես բանվորն  
առիպված ե գնել շուկաներում՝ կամ գյուղա-  
ցիներից, կամ մասնավորից։ Քաղաքի բնակչու-  
թյան պահանջները մսի ու յերշիկեղենի ասպա-  
ռիզում կոռապերատիվները բավարարել են մի-  
ջին թվով  $59,7^{\circ}/\text{o}$ , կովի յուղի ասպարիզում՝  
 $67^{\circ}/\text{o}$ , կաթնամթերքի ասպարիզում՝  $11,6^{\circ}/\text{o}$  և  
այլն։

Բանվորական կոռապերացիայի կողմից գյու-  
ղատնտեսական ապրանքների շուկայի անբավա-  
րաբ ընդդրկումը միանգամայն ակներե ե։ Ճիշտ  
ժամանակակից տվյալները 1926—27 թ. են վե-  
րաբերում ու, հետեւապես, չեն անդրադարձնում  
այսորվա իրական պատկերը, Անցյալ տնտեսա-  
կան տարվա ընթացքում այս պատկերը փոքր  
է շատե լավացել ե։ Բանվորական կոռապերա-  
ցիան, մանավանդ խոշոր կոռապերատիվների գծով

(Լենինգրադ, Մոսկվա, Սուրմովս, Տուլա, Բազ-  
դու և այլն), զգալի չափով ուժեղացրել ե բան-  
ջարեղենի ու մսի գործը. սակայն, այս հաջո-  
ղությունները դեռևս միանդամայն անբավարար-  
են ու պետք ե ընդարձակվեն:

Նոր՝ 1928—29 տնտեսական տարին այս  
ասպարիզում վճռական առաջխաղացման տարի-  
յե լինելու, մանավանդ, վոր անցյալ տարի-  
բանվորական կոոպերացիան բանջարեղեն գնե-  
լու համար առաջին անգամ զգալի ոգնություն-  
ստացավ պետությունից, վորն այս նպատակի-  
համար 10 միլիոնի վարկ տվեց:

Բանջարեղենի գործն այնպես պետք ե դա-  
սավորել, վոր բանվորի ընտանիքը տարերուոք-  
կարողանա բանջարեղենը կոոպերացիայից գնելու  
Այս բանը մանավանդ հարկավոր ե մեր յերկրի-  
պարենավորման հաշվեկշռի արդի վիճակում:  
Մենք վերն արդեն նշել ենք պարենավորման  
գործի դժվարությունների գլխավոր պատճառնե-  
րը: Հացամթերքներն այժմ, ինչպես ասում են,  
մեր պարենավորման հաշվեկշռի ամենից շատ-  
«նեղ տեղն» են կազմում: Սակայն, ամբողջա-  
կան հաշվեկշռը բավականաշափ ապահովում ե-  
յերկրի պահանջները բավարարելու գործը: Ան-  
բավարար մթերքներին զուգընթաց, բավարա-  
րներն ենք տեսնում: Մեկի պակասը լրացվում

և մյուսի ավելորդով։ Հարկավոր ե միայն յեռանդուն կերպով հուալ տալ գյուղատնտեսական ապրանքների գործը—վերջիններովս լայն կերպով փոխարինելով անբավարար ապրանքները։ Այս բանը մեզ շարունակ տանում ե ելի գեպի նույն բացառիկ կարեոր, գյուղատնտեսական մթերքների գործն ընդլայնող հրատապ առեղծվածը, մի առեղծված, զոր ամբողջ հասակով պետք ե գրվի առաջիկա հաշվետու վերընտրական կամպանիայի առաջ։

Ի՞նչ պատճառներ են մինչև որս խանգարել բանվորական կոոպերացիային գյուղատնտեսական մթերքների գործը գրատելու։

Սովորել ենք կարծել, թե այդ պատճառների շառանցքն այն ե, զոր կոոպերատորները գիտակցաբար հրաժարվել են բանջարեղենի և գյուղատնտեսական այլ մթերքների գործն ընդպարձակելուց, յելակետ ունենալով այս գործի բարգության նկատառութեալը—ճոթի ու հոտավետ յուղերի (ոծանելիք) առևտուրն ավելի հեշտ ու հանգիստ ե, քան թթու դրած կաղամբինն ու վարունգինը։ Այսորինակ արտառոց պնդումները ճիշտ չեն։ Դժվար թե այժմ կարենի լինի գտնել այնպիսի մի կոոպերատոր, վոր չգիտակցեր գյուղատնտեսական մթերքների շուկան ընդուրելու վողջ կարեռությունը։ Կո-

ոպերատորներին մեղադրելիս՝ սովորաբար լիռու-  
վին հաշվի չենք առնում այն որյեկտիվ պայ-  
մանները, վորոնք արգելք են հանդիսանում և կո-  
ռազերատիվ առետրի ընդարձակմանը բանջարե-  
ղենի ու գյուղատնտեսական այլ մթերքներին  
ասպարիզում։

Պատճառներից առաջինը ծագում ե գյու-  
ղացիների կողմից շուկա բերած գյուղատնտե-  
սական ասլրանքների հոկայական տեսակարաբ-  
եշից։ Միանդամայն համարձակ բան կլինեք-  
ասել, թե յերեք չորս տարվա ընթացքում կա-  
րելի լե հաղթահարել գյուղացիական տրադի-  
ցիոն «լիքը սայլը» և այն լիովին փոխարինել հա-  
սարակական սեկտորի (պետական և կոռպերա-  
տիվ առետուր) կանաչեղենի առետրով։

Յերկրորդ պատճառը գյուղատնտեսական-  
ապրանքներ մթերելու գործի անբավարար կադ-  
մակերպվածությունն եւ։

Մինչդեռ, ասենք թե, հացի շուկան ընդ-  
դըրկելու ասպարիզում՝ պետությունը մեծ ու-  
վագական հաջողություններ ե ձեռք բերել, մայ-  
ու բանջարեղենի շուկայում մենք միայն առա-  
ջին քայլն ենք անում ու չենք կարող այնքան-  
ել զգալի հաջողություններով պարծենալ։ Այս-  
շուկաները մյուսներից քիչ են կազմակերպված-

ու մինչև որս պատշաճ ուշադրություն չեն վա-  
յելել:

Ցերբորդ որյեկտիվ պատճառն ել, վոր բա-  
ցասական կերպով ե անդրադառնում բանջարե-  
ղենի ու շուտ փշացող այլ մթերքների շրջանա-  
ռության չափի վրա, ծագում ե բանվորական  
կոռպերացիայի տեխնիկական բազայի աղաղա-  
կող հետամնացությունից (բանջարեղեն պա-  
հելու հարմար տեղ չլինելը, խանութի ու պա-  
հեստի անհարմարությունը և այլն). Տարե-  
բոլոր բանջարեղեն ունենալու համար բանվորա-  
կան կոռպերացիան ստիպված ե միլիոնավոր  
փթերով ապրանք մթերել: Նոյնիսկ ամենափք-  
քիկ կոռպերատիվը տարեկան մի քանի հազար  
փութ կարտոֆիլ, բանջարեղեն ու կաղամբ  
պետք ե ունենա: Այս բանի համար հարկավոր են  
համապատասխան պահեստներ, վորոնք պետք  
չելին մինչհեղափոխական ժամանակի կանոչի  
ծախողին: Ներկայումս այդպիսի պահեստներ  
չկան, մի բան, վոր բնականաբար, արգելակում  
ե կոռպերացիայի այդ աշխատանքի ծավալումը:  
Իսկ ձմեռը բոլոր բանջարեղենի պաշարը հա-  
տուկ հարմարեցված շենքերում չպահելը վորոշ  
ոիսկի հետ ե կազված (զգալի չափով փշացում  
և այլն):

Այս գործում կարելի յե ելի մի շարք դժ-

վարություններ թվել. որինակ՝ պատրաստականություն ունեցող բանվորների անհրաժեշտ բընակազմ (կագր) չունենալը, բանջարամթերժան գործի թույլ ֆինանսավորումը բանկերի կողմից, գյուղատնտեսական մթերքների գների սխալ կարգավորումը առետրի ժողկոմատի կողմից, վոր այս գործն ուղղակի մնասաբերություն եր հասցնում, — բոլոր այս հանգամանքներն այս կամ այն չափով զժվարացել ու մինչև որս ել զժվարացնում են այս գործի զարգացումը:

Բայց, այնուամենայնիվ, այս որյեկտիվ պատճառներն ել հաշվի տանելիս՝ պետք ե խոստովանենք, վոր բանվորական կոռպերացիան ամենին ել չի ոգտագործել տվյալ գործն ուժեղացնելու բոլոր հնարավորությունները։ Առանձնապես պետք ե շեշտել տեղական մթերժան շուկաների թույլ ոգտագործումը բանկուաների կողմից։ Ճիշտ ե՝ սեփական մթերութմների զարգացման գործում կոռպերացիային վորոշ չափով խանգարել են կարգավորման սահմանափակիչ միջոցները, վորոնք կիրառված են յեղել Առետրի ժողկոմատի մարմինների կողմից։ Այժմ, սակայն, այս արդելքներն ել են չքացել. բանվորական կոռպերացիային այժմ անարգել հնարաւորություն ե տրված պաղաքանջարեղեն

պատրաստել։ Այս հնարավորությունն ամենա-  
լայն կերպով պետք է ոգտագործվի։

Բացի այդ, պետք եւ շեշտել, վոր կազմա-  
կերպված սպառողի կողմից մինչև որս անմի-  
ջական ազդեցություն չի արվել գյուղատնտե-  
սության վրա, գյուղատնտեսական արտադրու-  
թյունն սպառողի կարիքներին ու պահանջնե-  
րին հարմարեցնելու գործի վրա։ Այս ազդեցու-  
թյունը հետագայում կարող է և պետք եւ արվի  
պայմանագրերի (կոնտրակտացիա) ձեռվ, հան-  
ձինո գյուղացիների միությունների՝ նրանցից  
այս կամ այն հետագա բերքը գնելու ձեռվ, ու  
քաղաքի և արդյունաբերական կենտրոնների  
շուրջը բանջարանոցային, այդեգործական ու  
կաթնամթերային տնտեսություններ ստեղծելու  
համար գյուղական բնակչությունը դրդելու մի-  
ջոցվ։

Վերոհիշյալ թերություններին զուգընթաց,  
բանվորական կոռուպերացիայի առևտըական գոր-  
ծունեյության սապարիզում ելի մի խոշոր բաց  
կա, վոր արժանի յե շեշտելու։ Մենք նկատի  
ունենք կոռպերատիվների կողմից ազդեցություն  
չունենալը, կամ; ավելի ճիշտ, վերջիններիս  
թույլ ազդեցությունը սպառողի պահանջների  
վրա։ Կարծես, իբրև սովորություն՝ բանկոսպ-  
ներն այնպիսի ապրանքներ են ծախում, վոր

սպառողն ինքն ե նրանցից պահանջում։ Այն  
ինչ կոռպերացիան կոչված չե սպառողի արդի-  
արժատացած ճաշակն ու սովորությունները մի-  
այն բավարարել, — կոռպերացիան այդ ճաշակն  
ու սովորությունները պետք ե վերադաստիա-  
րակի, բանվորի գործածության բյուջեյի մեջ  
միշտ նորանոր մթերքներ ու ապրանքներ մըտ-  
ցընելով։ Այս միջոցով կկարողանանք զոչ մի-  
այն մեղմացնել այն ապրանքների պահանջը-  
վոր գլխավորապես պակսում են, այլև հնարա-  
վորություն կունենանք շրջանառության մեջ  
դնելու այնպիսի ապրանքներ, վոր բանվորն այ-  
սոր գեռես չի գնում, կամ քիչ ե գնում։ Դժբախ-  
տաբար, այս խնդրի կարեռությունը կոռպերա-  
տիմներն մինչև այժմ չեն ըմբռնել։ Այս բանով,  
մասնավորապես, բացատրվում ե նաև այն հան-  
գամանքը, վոր բանվորական կոռպերացիայի-  
կապը տնայնագործական արդյունաբերության  
հետ թույլ ե, — տնայնագործական ապրանքների-  
շուկան ընդգրկելու ասպարիզում բանվորական  
կոռպերացիան իր կողմից բավականաչափ ձեռ-  
ներեցություն չի հայտնաբերում և չի իրակա-  
նացնում մանր ու տնայնագործական արտադ-  
րության վորակի ու տեսակի վրա ունենալիք  
ազդեցությունը։ Այնինչ՝ կազմակերպված տը-  
նայնագործը շատ զդալի ու լրացուցիչ մասսա-

յական ապրանքներ կարող ե տալ շուկային. հարկավոր ե միայն շնորքով ոգտագործել տնայնագործի արտադրական եներգիան, այնպիսի մի հունի մեջ դնելով այն, վոր համապատասխանում ե բանվոր սպառողի շահերին ու պահսնչներին:

Սպառողական պահանջը կարգավորելու, տնայնագործական ապրանքները սոցիալիստական ապրանքաշերջանառության մեջ բաւելու խնդիրները կոռպերացիայի կարեվորագույն խնդիրների շարքը պես ե դասել:

---

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻ ՎՈՐԱԿ, ՀԻՄՆԱԿԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՌԱՑԻՈՆԱԼԱՑՈՒՄ

Անհնարին ե ավարտել կոռպերացիայի առաջ ծառացած խնդիրների լուսաբանումը, առանց կանգ առնելու սպառողի սպասարկման գործի վորակի հարցի վրա։ Այս հարցի վրա առանձին ուշադրություն հրավիրողն այն ե, վորայս ասպարիզում բանվորական կոռպերացիան սպառողի որինական դժգոհությունն առաջ բերող ճճղակ՝ ամենից շատ ունի։ Ներքեր, դանդաղ ապրանք տալ, առեվտրական աշխատանքի նետամեաց տեխնիկա, վանառողների ցածր պատ-

շաստականություն, սխալ՝ սպառողի կարիքներին չհամաձայնեցրած՝ առևվտրական ցանցի տեղութում, վերջինիս կրկնակի պակաս, առևվտրական ժամերի անհարմագողականությունը բանվորների ընտանիքի կենցաղավարության, — անավասիկ այն բացասական յերեսութների ցաները, վորոնք բանվորական կոռպերացիայի առևտըրական ապարատի անկատարելությունից են բղխում:

Պարզ ե, վոր այս յերեսութների բուն աղքյուրը կուլտուրական հետամնացությունն ե վորի ճիրաններում դարերով յեղել ե. մեր յերկիրը: Առևտրական ապարատն այս ասպարիգում բացառություն չի կազմում: Մեր սիրելի «Թաթոս Մաթոսները» — խանութպանները, առևտրի տեխնիկան կատարելագործելու համար հոգ քիչ են տարել և «ասիականության» հոտ ե փչում այն նյութական ժառանգությունից, վորի ճիման վրա մենք առևտրական գործի նոր ձևեր ենք կառուցում:

Արմատախիլ անել «ասիականությունը» այդքան կարճ — տասն և մեկ տարվա — մի մատժամանակի ընթացքում անհնարին կլիներ: Նեղցիկ, կեղտոտ խանութը, վոր առանձնապես հաճախ ե պատահում բանվորական ծայրամասերում, առևտրական գործի անորինակ հետամը-

նաց տեխնիկան դեռևս առաջվա պես սուր կերպով զգալ են տալիս իրենց։ Հսկալական ջանքերի շատ տարիներ են պահանջվելու, նախքան մենք կարողանանք լուծարքի յենթարկել անիծայալ անցյալի այս ծանր ժառանգությունը։ Անցյալ տասնեմեկ տարվա ընթացքում բանվորական կոռպերացիան այս ուղղությամբ վորոշառաջադիմություն ե արել։ Ապրանքային սովորական արդյունքները հնարավորություն չեն տալիս բավականաչափ յերեան բերել այդ աշխատանքի դրական արդյունքները։ Մեր անելիքն ե՝ սիստեմատիկաբար, միտնգամայն ոգտագործելով մեր ունեցած բոլոր հնաւավորությունների՝ բարձրացնենք մեր աշխատանքի վորակը, լավացնելով այն վոչ միայն մինչհեղափոխական նամանակի համեմատությամբ, վոր մեզ որինակ ծառայել չի կարող, այլեվ բանվոր ոպառսղի կուլտուրականության ու կուլտուրական պահանջողության անմտն չափով։

Չպետք ե մոռանանք, վոր այս խնդրի հաջող լուծումը բացառիկ դժվարությունների յեղեմ առնում, վորոնց թվում՝ կոռպերատիվ տընտեսության տեխնիկական հիմքը հիմնովին կառուցելու ու նորելու բարդ պրոբլեմին։ Հենվելով արդի նեղ ու կեղտոտ խանութի, հարմարություններից զուրկ ու հետամնաց սարքավո-

քում ունեցող ապրանքապահեստի վրա, պարզ  
ե, վոր անհնարին ե սպառեցուցիչ հետեանքնե-  
րի հասնել առևտրական գործի վորակն ու, հե-  
տեապես, նաև բանվորների սպասարկման գործի  
վորակը բարձրացնելու իմաստով:

Իր տնտեսական բաղան նորելով միայն  
սպառողական կոռպերացիան կարող ե վճռական  
հաջողություններ ձեռք բերել, վորոնք ըն-  
դունակ են բնակչության առևտրական սպա-  
սարկման գործը դնել մինչհեղափոխական ժա-  
մանակի անբաղդադելի բարձրության վրա:

Այս իսկ պատճառով ել բանվորական կո-  
ռպերացիայի նոր կապիտալիստական շինարա-  
քության խնդիրը մենք առաջ ենք քաշում իբ-  
րև ամենակարեռագույն խնդիր. այս խնդրի  
շուրջը պետք ե մոտակա տարիների ընթացքում  
կենտրոնացվի վողջ կոռպերատիվ հասարակայ-  
նության ուշադրությունը: Նոր խանութներ,  
պահեստներ, բանջարապահեստներ, ֆաբրիկ խո-  
հանոցներ ու այլ շենքեր կառուցելով՝ սկիզբ  
կդրվի այն զգալի աշխատանքին, վորի հետե-  
վանքն այն կլինի, վոր արմատախիլ կարվի  
անցյալի ժառանգությունն ու մեր կենցաղը  
կուլտուրական ել ավելի բարձր սկզբունքների  
վրա կկառուցվի:

Հիմնական շինարարության իրացումը կպա-

հանջի դրամական այնպիսի խոշորագույն ծախսեր, վոր կոռակերատիվի ուժը միայնակ չի պատի: Ամենազգույշ հաշվարկումով, միայն ամենասուբ կերպով զգացվող պահանջները բավարարելու համար բանվորական կոռակերացիան, մոտակա հնգամյակի ընթացքում, հիմնական շինարարության գործի մեջ հարյուրավոր միլիոն ոռուբլիներ պետք է դնի: Մեփական միջոցների չնշին աճումով,—առեւտրական կուտակման հընարավորությունները սահմանափակ լինելու պատճառով,—բանվորական կոռակերացիան ի վիճակի չի լինի, թեկուզ հենց հինգ տարվա մեջ, արդպիսի մի գումար ճարել իր սիստեմի ներսում: Մեծ լարվածությամբ եր քաղաքի բանվորական կոռակերատիվը նոր շինարարության համար տարեկան 15 միլիոն ոռուբլի բաժին հանում, ըստ տվյալների՝ վերջին 2 տարում:

Բանվորական կոռակերացիան չի կարող շինարարության վրա ծախսել իր առանց այն ել կրկնակի պակաս շրջանառության կապիտալները: Այսպիսի մի քաղաքականություն սխալ, բանվորական կոռակերացիայի խնդիրներին անհամապատասխան կլիներ բանվորի պահանջներն ընդգրկելու ասպարիզում: Կոռակերացիան նիւթական շինարարություն կարող է անել իր քինանսական հնարավորությունների չափով

միայն, անպատճառ պահելով իր տեսակացար  
կեխոր բանվոր դատակարգի սպառադական  
պահանջներն ընդգրկելու ասպարիզուս։ Իսկ  
առեւթի շրջանառության միջոցները հիմնական  
ծախսերի վրա պարագեցնելը կնշանակեր կո-  
ռոպերացիայի առեւթրական գործունեյության  
զարգացման դանդաղեցում։ Բանվոր զասակար-  
գի պահանջների ծավալի ընդարձակումը, նրա  
աշխատավարձի աճումը, ապրանքային արտադր-  
քանքի աճումը յերկրում—այս բոլորը պահան-  
ջում են կոռպերացիայի շրջանառությունների  
ավելացում։ Ուստի ե, յեթե նույնիսկ մենք  
հույս ենք դնում կոռպերացիայի սեփական  
միջոցների աճման վրա ի հաշիվ փայտվճար-  
ների, այս ավելացումն, այնուամենայնիվ, ա-  
ռաջին հերթին պետք ե բավարարի ընդար-  
ձակվող շրջանառության պահանջները։ Իսկ հիմ-  
նական շինարարության կարիքները չեն կարող  
լրիվ բավարարվել։

Ահա թե ինչու, նոր շինարարությունն ի-  
րականացնելու ասպարիզում, մի շինարարու-  
թյուն, վոր պետք ե բարելավի վոչ միայն կո-  
ռոպերացիայի տնտեսությունը, այլև առողջացնե-  
ապրանքաշրջանառության սիստեմը, սեփական  
միջոցները ծախսելուն զուգընթաց, բանվորա-  
կան կոռպերացիան ուժը ներածին չափ ու մեք-

պայմաններում հնարավոր ֆինանսական ոժան-  
դակություն պետք ե ստանա պետությունից,  
տեղական բյուջեներից, տնտեսական մարմին-  
ներից, կենցաղի բարելավման ֆոնդից և այլն:  
Առանց այս ոժանդակության անհնարին ե լուրջ  
կերպով դնել կոռպերատիվ տնտեսության տեխ-  
նիկական բազայի վերասարքավորման ու նորե-  
լու հարցը:

Կոռպերացիային յերկարատե վարկ տալու  
համար Համկոռպբանկին կից մոտիկ անցյալում,  
կառավարության վորոշմամբ, հատուկ վարկա-  
յին ֆոնդ եր ստեղծված: Ֆոնդը կազմվում է  
կոռպերացիայի ու կոռպերատիվ կազմակերպու-  
թյունների կողմից վերադարձվող այն փոխառու-  
թյունների ոգուտներից, վոր նրանք անցյալ  
տարիների բյուջեյական հատկացումներից են  
ստացել:

Այսպիսի մի ֆոնդ ստեղծելը, թեև դրական  
յերեսութե, սակայն, կոռպերացիայի հիմնա-  
կան շինարարության ֆինանսավորման հարցը  
լուծողը չե: Ֆոնդ ստեղծելու դրական կողմն  
այն ե, վոր, շնորհիվ վողջ սիստեմի հատկա-  
ցումներն այդ տեղ կենտրոնանալու, կոռպերա-  
տիվ կենտրոնները հնարավորություն ունեն կար-  
դավորելու այդ հատկացումները ծախսելու գոր-  
ծը, համաձայն առանձին կոռպերատիվ կազ-

մակերպությունների և ամբողջական շրջանների պահանջների։ Իսկ Փոնդի գործնական նշանակությունը (անցյալ տարի բանվորական կոռապերացիան Փոնդից ընդամենը 1.450 հազար ռուբլի յետ ստացել) չնչին եւ ու չպետք եւ գերազնահատվի։

Պետական ոժանդակությունը կոռպերացիայի հիմնական շինարարության գործում յերկու ճանապարհով պետք եւ ընթանա. առաջին՝ իրրե գրաժական հատկացումներ՝ բյուջեների, բանկային վարկերի և այլ գծերով և, յերկրորդ՝ իրրե շինարարական կազմակերպությունների վրա գրփող պարտավորություն՝ կրպակների, խանութների, ճաշարանների և այլն կառուցում քանվորական թաղամասերում ու կոմունալ տներում։ Կոմունալ և բնակարանային խոշոր շինարարության դեպքում վերջին միջոցի կիրառումը հնարավոր ե, առանց շինարարական կազմակերպությունների համար առանձին դժվարությունների։ Մինչդեռ այս շինարարությունը հիմա առանց վերոհիշյալ կարիքները հաշվե առնելու յետ կատարվում, նոր ու մեծ բանվորական թաղերը կառուցվում են առանց ապահովվելու խանութների, ճաշարանների և այլ ձեռնարկությունների շենքերով։

Առանձնապես պետք եւ շեշտել, վոր հացա-

գործարանների կառուցումը, իբրև գյուղատքն-  
աեսության համար առանձին կարեորություն  
ունեցող ձև, պետք ե, վորպես բաղկացուցիչ  
մաս, մտնի յերկրի ընդհանուր արտադրական  
ֆինանսական ծրագրի մեջ:

Նոր հիմնական շինարարության կարեորա-  
գույն նախադրյալներն են հանդիսանում՝ իր  
ծրագրայնությունն ու շինարարական աշխա-  
տանքների եժանությունն ձեռքբերելը։ Մակայն,  
այս յերկու տեսակեալց ել մեր շինարարու-  
թյունը պատշաճ բարձրության վրա չի։ Բան-  
վորական կոռպերացիան մի գլուխ շինել ե թե՛  
թանգը և թե՛ եժանը, և դեպքեր են պատահել,  
վոր բանվորական կոռպերատիվն այնպիսի տիպե-  
խանութներ ու կրպակներ ե շինել, վոր մի այլ  
տեղ իրենց ծախսը չեն հանել։

Սպառողական կոռպերացիայի հիմնական  
շինարարության ասպարիզում շատ թերություն-  
ներ են յեղել, վորոնց պատճառը յեղել ե կո-  
ռպերատիվ կենտրոնների կողմից ղեկավարու-  
թյուն չլինելը, փորձի փոխանակության պա-  
կան ու տեխնիկական ոգնության թուլություն-  
նը։ Կենտրոնում մինչև վերջերս ել չի յեղել  
այնպիսի մի մարմին, վոր կարողանար ոժան-  
դակել գավառի շինարարության գործին, կոն-  
սույլտացիայի յենթարկել այն ու տեխնիկական

ոգնություն հասցներ։ Այսպիսի մի մարմին—  
«Տեխշինբյուրո» ն—ծենտրոսոյուղին կից ըս-  
տեղծված ե յեղել միայն 1928 թ. սկզբներին։  
«Տեխշինբյուրոյի» անելիքների մեջ են մտնում  
կոռպերատիվներին կոնսույլտացիոն տեխնիկա-  
կան ոժանդակություն հասցնելը հիմնական շի-  
նարարության բոլոր հարցերում։ Միաժամանակ  
«Տեխշինբյուրո» յի վրա յե դրված այնպիսի  
շինարարության բոլոր ծրագրերի քննությունն  
ու հաստատումը, վորի արժեքը սահմանված  
չափից անցնում ե։

Հիմնական շինարարական գործի մեջ հե-  
տագայում ավելի ծրագրայնություն պետք ե-  
մտցվի։ շինարարությունը պետք ե թե ավելի  
ձեռնառու և թե ոգտավետ դարձնել։ Սակայն,  
այս բոլորն այն դեպքում հնարավոր կլինի, յերբ  
բանվորական կոռպերատիվները ծրագրային  
խիստ դիսցիպլինա պահպանեն՝ թե շինարարու-  
թյան ծրագիրն իրականացնելու և թե կառուց-  
վող ձեռնարկությունների տիպ ընտրելու գոր-  
ծին լուրջ մոտեցում ունենալու իմաստով։ Այս  
տեսակետից բանվորական կոռպերացիան ներ-  
կայումս խանութների ու կրպակների մի շարք  
տիպական նախագիծ ունի (անցյալ տարի կա-  
տարած համամիութենական մրցանակաբաշխու-  
թյան հետեանքով ձեռք բերած), վորոնք ման-

բաղնին կերպով մշակված են։ Իսկ գործնականում ստուգված միջին արտադրողականության մեքենայացված հացագործարանն ու մի շարք ալլ նախագծեր կհեշտացնեն այնպիսի տիպի անհրաժեշտ արտադրական ձեռնարկությունները ընտրելու գործը, վորոնք մեր պայմաններին ավելի յեն համապատասխանում։

Հիմա, որինակ՝ խոշոր նշանակություն եւ ստանում այն հարցը, թե բանվորական կոռագերացիան իր առևտրական ցանցը կառուցելիս, մոտակա տարիներս առևտրական ձեռնարկության ինչ տիպի վրա պետք ե հենվի։

Նկատի ունենալով այս հարցի բացառիկ կարևորությունը, թույլ ենք տալիս փոքր իշատե մանրամասն կանգ առնել վերոհիշյալի վրա։ Այս հարցի շուրջն այժմ շատ ու միանգամայն հիմնավոր վեճեր կան։

Վերջին յերեք տարվա ընթացքում բանվորական կոռագերացիայի առևտրական ցանցը թեև քանակապես մեծացել ե, անցյալ տարվա վերջին հասնելով մոտ 23.700 առևտրական միավորի, սակայն, այս աճումը դարձյալ զգալի չափով հետ ե մնում մասնավորի առևտրական ցանցի կծկման արագությունից։ Առարկան ցանցի անբավարարության պատճառով, վոր, առևտրի շրջանառությունների կատաղի աճման

պայմաններում, վերջերս առանձնապես սուլ  
կերպով ե յերեան յեկել, սպառողի սպասարկ-  
ման գործի ուղղակի վատացումն և նկատվում:  
կոռպերատիվ աշխատանքների դործնականում  
հերթերը սովորական յերեսույթ են դարձել: Բացի  
այդ, դրությունը կրկնապատկվում ե նաև այն-  
քանով, վոր քանակատիվ ու ամբողջությամբ  
անբավարար առետրական ցանցը հավասարապես  
չի բաշխված ամեն մի քաղաքի շրջանների վրա:  
Որինակ՝ ծայրաժամասերի բանվորները համարյա-  
գուրի են առետրական շենքերից: Այն ինչ,  
չի կարելի ստիպել տանտիկնոջ, վոր, որինակ-  
ասեղի կամ մի կոճ թելի համար գնա քաղաքի-  
կենարունը հասնի: Ահա թե ինչու մոտիկ ապա-  
գայում այնպիսի մի միջոց պետք ե գտնել, վոր  
քանվորական կոռպերացիային ոգներ բավարար-  
կերպով լրացնելու իր առետրական ցանցը կա-  
ռուցելու բացը և հասնեք թե այս ցանցի ընդ-  
հանուր քանակական աճման և թե վերջինիս հա-  
վասարաչափ տեղակորմանը շրջաններում՝ հա-  
մաձայն սպառողի կարիքների:

Միանգամայն անվիճելի յե, վոր քանվորա-  
կան կոռպերացիան այս դեպքում միանգամայն  
հաստատուն գիծ պետք ե վարի՝ խուզր կրպակ-  
ներ ու խանութներ կառուցելու համար, վորոնք  
սպառողին ամենալավ հարմարություն տվողն:

ու առևտրի տեխնիկան ու ացիռնալացնելու գործին առավել չափով հարմարեցվածը լինին:

Խոշոր խանութների ու կրպակների շինարարությունը բանվորական կոռպերացիայի ուժից վեր դրամական զգալի ծախսեր եւ պահանջում, ուստի և բանվորական կոռպերացիան չի կարող հարկ յեղած չափով այդպիսի խանութներ կառուցել: Պարզ ե, վոր մինչև վորոշ ժամանակ կոռպերատիվները կանգնած պետք եւ լինեն առևտրի ավելի եժան ու ավելի մանր տեսակների զարգացման ճանապարհի վրա (արկղոներ, տաղավարներ, թարախներ, շրջիկ առևտուր): Առևտրի այս ձեի ողտագործումը, պարզ ե, վոր պետք են նկատվի վորպես խոշոր խանութների շինարարության զուգընթաց կիրառվող ժամանակավոր մի միջոց: Սակայն, ընթացիկ ժամանակաշրջանի համար սպառողի սպասարկման գործը բավարարելու ասպարիզում, այս միջոցն ել կարող եւ եյական նշանակություն ունենալ:

Ընթացիկ տնտեսական տարին, արկղառևտրի զարգացման տեսակետից, բեկման տարի պետք եւ լինի: Այս տարվա մեջ բանվորական կոռպերացիան արկղառետրի ցանցը համարյա պետք եւ կրկնապատկի—3 800 միավորից մինչև 6 800 միավորի հասցնելով այն: Իսկ առաջիկա

1929—30 տ. ընթացքում բանվորական կոռպերացիայի արկղառետրի ցանցը 15.000 միավորից պակաս չպետք ե լինի։ Ինչ կերպ ել ուզում ե լինի, այս ծրագիրը պետք ե իրականացվի։ Արկղառետրի ցանցի շինարարության գործին զգալի չափով արգելք հանդիսացողը հողամասերի չափաղանց բարձր կապալավարձն ե։ Քանի զեռ կապալի գրույքները չեն փոփոխվել ցածրացնելու իմաստով, խանութառետրի պահպանման գործը վնասաբեր ե լինելու, մի բան վոր չենպաստի այս ցանցի գարզացման։

Գետք ե շեշտել, վոր արկղառետրի ու շուկային տաղավարների ել ավելի կատարյալ տիպեր կառուցելու նպատակով՝ կենտրանսեկցիան անցյալ տարի մըցանակաբաշխություն կատարեց, վորի արդյունքն յեղավ այն, վոր այդ շինվածքների ավելի նպատակահարմար տիպեր առաջարկվեցին։ Խոսելով, սակայն, սպառողի սպասարկման գործի թերությունների ե այն բարելավելու միջոցների մասին, սխալ կլիներ բոլոր թերությունները բացատրել կոռպերատիվ տնտեսության տեխնիկական բազայի ցածր մակարդակով։ Իր առետրական աշխատանքի մասնակի բարելավմանը բանվորական կոռպերացիան արդեն կարող ե հասնել նույնիսկ արդի հետամնաց բազայով—առետրա-

պահեստի -գործը կազմակերպելու կտրուկ ու  
բազմակողմանի ռացիոնալացում, աշխատանքի  
նոր մեթոդներ, դեպի սպառողի պահանջներն  
ու հարմարություններն ուշադրության վճռա-  
կան ուժեղացում մտցնելով։

Ռացիոնալացում մտցնելու գործում ներ-  
կայումս յերկու սխալ թեքում ե նկատվում,  
վորոնք վճռական կերպով պետք ե դատապարտ-  
վեն։ Առաջին թեքումը հանգում ե այն տեսա-  
կետի պահպանման, վոր, առանց առևտրական  
գործի նախնական ու լայն մեքենայացման,  
անհնարին ե վորևե ռացիոնալացում մտցնել։  
Յերկրորդ թեքումն, ընդհակառակը, ժխտում ե  
ամեն մի մեքենայացում։ Թե մեկ և թե մյուս  
ժխտումներն, անշուշտ, ճիշտ չեն։ Զի կարելի,  
սպասելով կատարյալ մեքենայացում մտցնելու,  
ձեռքերը ծալած նստել, կարծելով, թե, առանց  
մեքենաների, անելու բան ել չկա։ Առանց մե-  
քենաների յել բանվօրական կոռպերացիան կա-  
րող ե զգալի չափով բարելավել, հեշտացնել,  
եժանացնել իր աշխատանքը, վոր դեռևս այն-  
քան ել լավ դրստված չի։ Ուստի և մեքենա-  
յացման կուրս ընդունելով—այնպիսի մի կուրս,  
վոր յերկար տարիների համար ե հաշվի առած,  
բանվօրական կոռպերացիան միաժամանակ

պեսք և ամեն տեսակի այլ միջոցներով բարեխափի իր առուրյա աշխատանքը:

Բացի այդ, չպետք ե աչքաթող անենք, վոր մեքենայացումն անխուսափելիորեն պահանջ կառաջազրի՝ ապարատն այն աստիճանն կազմակերպել ու վերջինիս կուլտուրական մակարդակն այնքան բարձրացնել, վոր, յերբ յերեանդա մեքենան, այդ ապարատը կարողանա նպատականարմար կերպով ոգտագործել այն։ Այս բանն ել մենք այսոր չունենք։

Մի շարք հնարավորություններ կան, վոր շոշափելի կերպով կարող են բարփոքել սպառողի սպասարկման գործը։ հարկավոր ե միայն ավելի յեռանդուն կերպով կանգնել առետրական գործի պրակտիկայում այնպիսի ձեռնարկություններ մտցնելու ճանապարհի վրա, վորոնք ընդունակ են առետրի գործը բարփոքելու և ավելի լավ կազմակերպելու։ Այս թվին են պատկանում այնպիսի ձեռնարկություններ, ինչպիսիք են՝ ապրանքության նախարարության կողմէն սիստեմ մատուցնելը, առեվտրի ժամերն սպառողի պահանջներին նարմարեցնելը, հաստիքների նիւթեղավորումն ամեն մի խանութում, վաճառողների կողմից աշխատանքի գնալու գործի դասավորումը՝ նկատի ունենալով խանութի առքողջ որվա բեռնավորումը, սպառողի կողմից

իրեն հարկավոր ապրանքների նախորդ պատվերներ տալու սիստեմ մացնելը, ապրանքները տուն տանելու պրակտիկա սահմանելը, առեվտական ցանցին ապրանքներ մատակարարելու նիւթ ու հավասարաչափ սիստեմ կազմակերպելն ու մի շարք այլ ձեռնարկումներ:

Անցյալ տարվա ընթացքում մի շարք կոռոպերատիվներ ու ացիոնալացման ճանապարհը բռնեցին ու վորոշ հաջողություններ ունեցան։ Հարկավոր ե, վոր այս ճանապարհը բռնի քաղաքի բանվորական կոռպերատիվների վողջ ցանցը։

Առաջին հերթին ազգու միջոցներ պետք են ձեռք առնել հերթերը վերացնելու։ Պետք են ասենք, վոր հերթերի պատճառները վո՞չ միայն առևտրական ցանցի դրության, սպասարկման պերսոնալի (անձնական կազմի) անսովոր ծանրաբեռնվածության, առևտրի տեխնիկայի անբավարարության, այևս զբարի չափով ապարատի անկարգադրողականության մեջ են թագնված։ Սակայն, մյուս պատճառներն ել, վորոնք հերթեր են ստեղծում, կարող են զգալի չափով մեղմացվել, — պետք են միայն յեռանդուն կերպով կյանքում կիրառել վերոհիշյալ ձեռնարկումները, կարգադրողականություն հայտնաբերել՝ վաճառողների ոեզերվներ աշխատանքի մեջ քաշելու, քիչ ծանրաբեռնված բաժանմունքնե-

բից ավելի ծանրաբեռնվածները վաճառողներ  
փոխադրելու ասպարիզում գնորդների առավել  
չափով հոսանքի որերին։ Հերթերը նոսրացնելու  
գործի վրա կարող ե զգալի չափով ազդել հիմ-  
նարկների ու ձեռնարկությունների կողմից  
տարբեր ժամկետներով աշխատավարձ վճարելու  
որենքի կիրառումը կյանքում։ Այս բանին բան-  
կոռպերը կարող են և պետք ե հասնեն արհկազ-  
մակերպությունների ոգնությամբ։

Սակայն, սրանով ել չի ապահովվում հնա-  
բավոր ձեռնարկումների ցանկը։ Այս ցանկի մեջ  
պետք ե մտնեն նաև այնպիսի ձեռնարկումներ,  
ինչպես՝ դեֆիցիտային ապրանքների համար որ  
առաջ չեկեր պատրաստելը, նման ապրանքներ  
բաշխելու համար հատուկ տեղեր նշանակելը  
(այնպես, վոր բավարար չափով յեղած ապ-  
րանքներ բաց թողնելուն չխանգարեն), հացի,  
կաթի, նազթի և այլ մթերքների շաբաթական  
ու յերկշաբաթյա արոնեմենտներ մտցնելը։

Զգալի չափով բարելավում ե պահանջում  
նաև ապրանքները խանութների վրա բաշխելու  
գործը։ Մի գլուխ թերահաշվառման դեպքեր են  
նկատվում այս խանութում, կամ գերահաշվառ-  
ման՝ մյուսում։ Յեվ պարզ ե, վոր առաջին  
հերթին ապրանքներով լիովին պետք ե ապահո-

վել այն կրպակները, վորոնք բանվորական թա-  
ղամասերում են աշխատում:

Ռացիոնալիզատորական ձեռնարկումների  
հաջողության կարեորագույն պայմանը փոքրձեռ  
փոխանակության դրույթն է. Հենց իրար հետ  
ավելի զարգացած ձեռի հարարերությունն ունե-  
նալու պրոցեսում միայն կոռպերատիվները կտ-  
րող են ոգտավետ սկզբունքներ փոխ առնել ի-  
րարից և, այսպիսով, այդ սկզբունքները վողչ  
սիստեմի սեփականությունը դարձնել: Դժբախ-  
տաբար, մինչև որս այսպիսի փոխանակությունն  
չի յեղել: Պետք է աշխատել, վոր այս բանը  
սիստեմի մեջ մտնի: Այս տեսակետից ավելի  
եյական դեր կարող է խաղալ կոռպերատիվ մա-  
մուլը, մանավանդ բանվորական կոռպերացիայի  
և միջկառ խորագրով հանդեսը, վոր կոչված ե  
կոռպերատիվ ակտիվի սպասարկության համար:  
Անհրաժեշտ է նաև կենդանի կապի ստեղծում  
առանձին կոռպերատիվների միջև՝ փայտերե-  
րին ու առետրական աշխատակիցներին ընտիր  
կոռպերատիվների եքսկուրսիաներ ուղարկելու  
միջոցով, այնպիսի կոռպերատիվներ, վոր ապ-  
րանքային գործի տեխնիկան ուցիոնալացնելու  
ասպարիզում ոգտավետ ձեռնարկումներ ունեն:  
Պակաս նշանակություն չունի նաև առետրե-  
րեխնիկայի ուցիոնալացման ասպարիզում նը-

վաճումները լուսաբանող մշտական ու պարբերական ցուցահանդեսների կազմակերպումը կենտրոնում:

Բացի այդ, խոշոր կոռպերատիվներին պետք է առաջարկել փորձնական-ցուցադրական խառնութներ կամ կրպակներ ստեղծել, վորոնց որին ակով կարողանար սովորել կոռպերատիվի մյուս քոլոր առևտրական ցանցը:

Ուսցիոնալիզատորական ձեռնարկումների իշխականացումը չի կարող ու չպետք է միայն վերևից յեկող հրամանագրումների ուղիով ընթանա: Կոռպերատիվ աշխատանքի բոլոր բնագավառները բարելավելու հնարավորություններ ստեղծելու համար մասնակից պետք է արվեն վողջ ակտիվը և աշխատակիցների ամբողջ զանգվածն ու նրանց պրոֆեսիոնալիզատությունները, մասնավորապես, տնտեսական խորհրդակցություններն ու տնտեսական հանձնաժողովները: Միանգամայն պարզ է, վոր սպառողի հետ անմիջականորեն շփում ունեցող աշխատակիցները, վորոնք գործի վորոշ բնագավառում կազմակերպման այս կամ այն անհարմարություններն առաջնամեն որ զգում են, կարող են ռացիոնալիզատորական գնահատելի առաջարկներ՝ անել: Մյուս կողմից՝ վերջիններիս ստուգումն ու կիրառումը հնարավոր է: միայն գործնական աշխատա-

Ալիցների վողջ մասսայի փորձի հաշվառումով,  
ժացվող ձեռնարկութերի եյությունը նրանց  
կողմից յուրացնելով:

Նույնպես ել կոռպերատիվ գործի ռացիո-  
նալացմանը լայն կերպով մասնակից պետք ե-  
արվեն կոռպերատիվն ու փայտերերի զանգ-  
վածք: Պետք ե առավել չափով ուշադրություն  
դարձնել սպառողների հայտարարություններին  
ու առաջարկություններին: Պետք ե նաև ուղղակի  
ու սիստեմատիկ համագործակցություն սահ-  
մանվի փայտերերի ու խանութի պերսոնալի  
միջև: Կրպակների գործի բարելավման հարցերը  
պետք ե դրվեն փայտերերի ու վաճառողների  
միացյալ պարբերական ժողովներում:

Առևտրական գործի ռացիոնալացման հա-  
ջողություններն զգալի չափով կախված են ա-  
ռևտրակոռպերատիվ աշխատակիցների բնակազմ  
(կադր) ընտրելուց: Դախլի կանգնող աշխատա-  
կիցների արդի վորակը թույլ ե տալիս ել ավե-  
լին ցանկալ. մի բան, վոր ընականաբար անդ-  
րադառնում ե կոռպերատիվ աշխատանքի վո-  
րակի վրա: Առևտրական աշխատակիցներ պատ-  
րաստելու, նրանց վորակը բարձրացնելու աս-  
պարիզում յեղած բացն իր ամբողջ հասակով  
պետք ե դրվի մեր առաջ: Ուղղակի աղետք ե  
ասել, վոր առանց կոռպերատիվ ծառայողների

բնակազմի վորակը բարելավելու, թե Նրանց  
տեխնիկական պատրաստականության իմաստով  
և թե, մանավանդ, հասարակական ու կուլտու-  
րական տեսակետից անհնարին ե այն հսկայա-  
կան հարցերի լուծումը, վոր ծառացած են  
բանվորական կոռպերացիայի առաջ՝ սպառողին  
սպասարկության գործի վորակը բարձրացնելու  
առաջարիգում։ Պետք ե աշխատենք, վոր 135 հա-  
ղար բանվորից ու ծառայողից բաղկացած բան-  
վորական կոռպերացիայի հսկայական բանակն  
ընդունակ լինի՝ թե իր տեխնիկական վորակով  
և թե հասարակական-կուլտուրական պատրաս-  
տականությամբ, —վոչ միայն գրադիտորեն, քա-  
ղաքավարի ու շնորհքով սպասարկելու սպառո-  
ղին, այլև յուրացնի կոռպերացիայի մասին դե-  
պի աշխատավոր բնակչության բուն դանդան  
ունեցած լենինյան գաղափարների հաղորդիչ-  
ները։

Կոռպերատիվ տնտեսության աշխատանքի  
կազմակերպման բացը պետք ե նկատենք իբրև  
ամենակարևորագույն բացերից մեկը։ Կոռպե-  
րացիայի աշխատակիցներ պատրաստելու գոր-  
ծի մեջ մեծ ծրագրայնություն պետք ե մացնել։  
Առանձին ուշադրություն պետք ե դարձնել այն-  
պիսի վորակի աշխատակիցներ պատրաստելու

վրա, վորոնք ներկայումս մեզնում քիչ են  
(որինակ՝ մսագործ, կանաչի ծախող և այլն):

Այս գործի զլխավոր ճանապարհը աշակեր-  
տության կատարելագործված սիստեմն եւ:

Աշակերտների խիստ ընտրություն, աշա-  
կերտների միաժամանակ պարտադիր ուսուցում  
առետրա գրասենյակային ուսանողության տիպի  
դպրոցներում, և այս դպրոցների կազը առե-  
տրա-կոռագերատիվ կրթության բարձր աստի-  
ճանների հետ.—ահավասիկ այն հիմնական մի-  
ջոցները, վորոնք պետք ե կիրառվեն այս ուղ-  
ղությամբ:

Նոր ընակաղմերի պատրաստումը պետք ե  
կատարվի ծրագրված կարգով, կատարյալ հա-  
մաձայնությամբ այդ կագրերի իրական պա-  
հանջի՛ առետրի զանազան ճյուղերի կողմից և  
բանվորական ու սպառողական վողջ կոռագեր-  
բացիալի առավել ազդեցությամբ առետրի վրա.  
ըստ վորում՝ առետրա կոռագերատիվ կրթության  
վողջ սիստեմը, ընդհանրապես, սերտ կազ պետք  
ե ունենա առետրա-կոռագերատիվ անընդհատ  
պրակտիկայի հետ:

Պետք ե ստեղծել նաև խրախուսանքի մի-  
ջոցների սիստեմ՝ գործին նվիրված, փորձված  
աշխատակիցների համար (անհատական պրեմիա,

բարձր պաշտոնների համար առաջ քաշում, լրացուցիչ արձակութղներ):

Կոռպերատիվ ազարատի վորակը բարձրացնելուն զուգընթաց, պետք ե ուժեղացվեն ապարատը բանվորականացնելու, կոռպերատիվի աշխատակիցներին վարչական առևտրական աշխատանքի համար առաջ քաշելու, այս բանի համար նրանց նախապես ու տեխնիկորեն պատրաստելու աշխատանքները:

### ՍՊԱՍԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

Սպառողի սպասարկման ասպարիզում կարենը կոռպերացիայի առևտրամիջնորդական սպասարկությունների արժեքն եւ Բանվորական կոռպերացիան վոչ միայն կոչված եւ առևտուր անելու համար, այլև թե՛ կուլտուրական ձեռվ և թե՛ եժան առևտուր անելու: Իսկ բնչչ չափով ե բանվորական կոռպերացիան հասել այս բանին և բնչչ արժեքը ունեն սպառողի համար իր արած սպասարկությունները:

Կոռպերացիայի անցյալ յերեք տարվա աշխատանքի դնահատականը տալիս պետք ե ասենք, վոր իր աշխատանքներն եժանացնելու սպարիզում ևս կոռպերացիան աչքի ընկնող հաջողություններ ե ունեցել:

Բանվորական կոռպերացիայի տոկորագաղերական ծախսերը միջին թվով իջել են՝ 1924—25 տնտեսական տարվա  $11,7^0/0$ -ից 1925—26 տնտեսական տարում՝ մինչև  $10,3^0/0$ -ի և 1926—27 տարում՝ մինչև  $10,1^0/0$  է։ Բայց և այնպես, պետք եւ ասել, վոր բանվորական կոռպերացիայի ծախսերի մակարդակը 1926—27 տ. տարում 1926—27 տ. համեմատությամբ մի քիչ բարձրացել է՝  $10,2^0/0$ -ից մինչև  $10,5^0/0$ .

Այս վերջին հանգամանքը բացարձում եւ պլիսավորապես, այսպես ասած՝ կոռպերացիայից անկախ պատճառով իր ծախսերի մի մասի՝ տուրքերի, կազարավարձի և այն աճումով՝ կախյալ ծախսերի իջեցման վողջ եֆեկտը կլանվել եւ անկախ ծախսերի աճումով։ Մինչդեռ, ասենք՝ ծառայողներ պահելու ծախսը (մեծ կոռպերատիվներում) անցյալ տարվա առաջին կիսամյակի շրջանառության նկատմամբ 1924—25 տնտ. տարում  $4,41^0/0$ -ից կրճատվել է մինչև  $3,2^0/0$ -ի, այն ինչ, ընդհակառակը, այդ ժամանակամիջոցում, շրջանառության նկատմամբ, տուրքերը  $1,98^0/0$ -ից բարձրացել են մինչև  $2,63^0/0$ ։

Այսպիսի մի պատկեր ել ստացվում է կապալավարձի նկատմամբ։ Այս ասպարիզում ել զգալի աճում ենք տեսնում, ուստի և ուցիու-

նալացման, խնայողական ռեժիմի և այլ պատճառներով կոռուպերատիվների կողմից իրենց ծախսերը կրճատելու վողջ արդյունքը կլանվել եւ տուրքերի բարձրացումով և կապալավարձի բարձրացումով:

Այսուամենայնիվ, անցյալ 3 տարվա ընթացքում բանվորական կոռուպերացիան իր սպասարկության արժեքի զգալի իջեցում եւ ունեցելէ իսկ 1927—28 տ. տարում, շրջանառության նըկատմամբ, արժեքն իջեցրել եւ մինչև 9,6% ի:

Կարող եւ, արդյոք, կոռուպերատիվ մանրածախսը կնալ դեպի իր ծախսերի հետագա կրճատումը: Մեր կարծիքով՝ չի կարող Յեթե հետոյել նա դեպի իր ծախսերի կրճատումը գնաւապա նա կհարփածի սպառողին: Իհարկե, բանվորական կոռուպերացիան առաջվա պես ամենավճռական պայքարը պետք եւ մղի անարտադրողական ծախսերի դեմ: Սակայն, մենք չենք կարող սպասել ծախսերի, առանց այն ել ցածր, ընդհանուր մակարդակի իջեցում:

Գործառնական աշխատանքի վորակն այժմ ել թույլ եւ տալիս ել ավելին ցանկալ. սակայն, միանգամայն պարզ եւ, վոր աշխատանքի վորակը բարելավել, այդ նշանակում եւ թե բարձրացնել վաճառողների վորակը, ավելացնել նորանց թիվը, ընդարձակել ցանցը, այն ավելի

Դավ սարքավորել, լավորակ փաթթոցում (յոպ-  
կօքռ) անել և այլն և այլն, Բոլոր այս ձեռ-  
նարկումները ծախսերի արդի մակարդակի իջեց-  
ման պայմաններում չեն կարող կիրառվել:  
Կրկնում ենք՝ գոյություն ունեցող ծախսերի  
մեջ պետք եւ վորոնել ու դուրս շպրտել անար-  
տադրողական հոդվածները: Մասնավորապես  
մանրազնին վերսանայման պետք եւ յենթարկվեն,  
այսպես ասած՝ ադմինիստրատիվ - վարչական  
ծախսերի հոդվածները: այսինքն՝ ծախսերի այն  
մասը, վոր անմիջական կապ չունի սպառողի  
սպասարկման գործի հետ: Ծախսերի այս հոդ-  
վածները պետք եւ իջեցվեն, իսկ ծախսերի նոր-  
մաներից գոյացող ռեզերվը պետք եւ գործա-  
դրի սպասարկման գործի ռացիոնալացման հե-  
տադա ձեռնարկումների վրա: Բայց, ընդումին,  
ժոտիկ ժամանակաշրջանի համար անխուսափե-  
լի յեւ կոռպերատիվ մանրածախի ծախսերի վո-  
րոշ բարձրացում — առևտրական պերսոնալը պա-  
հելու և առևտրական ցանցի սարքավորման  
ծախսերի հոդվածներով: այսպես՝ առղի ծախ-  
սերի նորմաներով ամեն մի առևտրական միա-  
վորի սարքավորման համար կոռպերատիվին տա-  
քեկան ընկնում ե 30 ոուրի: Կարելի՞ յեւ, արդ-  
յոք, այսպիսի չնչին նորմաներ ունենալու դեպ-  
քում խոսել ռացիոնալացման մասին, առևտրա-

կան աշխատանքի վորակը լավացնելու մասին Յերե հաւաքի առնելու լինենք այն ժամանակը, վոր մեր աշխատանքի ասպարհում յեղած բացերի նետեվանենք սպառողն է ստիպված կուցնել ներբերի վրա յեվ վերածելու լինենք այդ ժամանակը դրամի, ապա ավելի ժան ակներեկ կլինի, վոր սպառողն ոխսի և անում կուցնելու այս բանի վրա բոլոր այն ոգութը, ինչ վոր զների իջեցումով և ստացվել: **Ժողովներում բանվորներն ամենայեռանգուն կերպով հարձակվում են սպասարկման դործի վորակի վրա:** Նրանցից վոմանք ուղղակի ասում են՝ «ինձնից մի կոպեկ ավելի առեք, բայց մի թողեք գործիստոտ, հաց և այլն գնելու համար այդ անտակում կորցնեմ իմ թանկագին ժամանակը»:

Դեռ ավելին՝ կոռպերատիվ հերթերի պատճառով բանվորները մի զլուխ մասնավորի մոտ են գնում ու նրան ավելի թանդ վճարում միայն թե հերթի չկանգնեն:

Այսպիսի մի վիճակում հարց դնել մանքածախի ծախսերի հետագա մեքենայորեն իջեցման մասին, այդ նշանակում ե գնալ դեպի քաղաքի բանվոր բնակչության, առանց այն եղ դեռևս վորակապես անբավարար, սպասարկման դործի ել ավելի վատացում:

**Ծախսերի հետագա իջեցման հարցադրումը**

հնարավոր ու անհրաժեշտ ե մեծածախ ու միշտանկյալ առևտրական ողակների նկատմամբ։ Պետք ե ձեռք բերել ապրանքամուտեցման ամենահնարավոր հեշտացման ու եժանացման սիստեմ— Փարբիկից մինչեւ մանրածախ և այսպիսով սպառողի համար միջնորդական սպառարկման արժեքի իջեցում ու ամրողջական ապրանքների գների իջեցում։ Յերբ մենք կոռպերատիվ մանրածախի ծախսերի առանձին հոդվածների վորոշ բարձրացման մասին ենք խոսում, մենք այսպիսով ամենեին ել հարց չենք դնում մանրածախի գների բարձրացման մասին։ Այսպիսի մի տեսակետ մենք ճիշտ համարել չենք կարող։ Ասպիսի մի հարցադրում քաղաքականապես վնասակար կլիներ և այս տապարիզում յեղած նվաճումների վիճեցում կսպառնար։ Մանրածախի զները  $10^{\circ}/_0$ -ով իջեցնելու առթիվ անցյալ տարի վարած կամպանիայի ժողովրդական Տիտեսական ու Ֆադանիական խուռու նեանակուրյունն անծխսելի լին։ Կամպանիայի արդյունքները լավ պետք ե ամրապնդվեն։ Հետազայում ել բանվորական կոռպերացիան սպառողին լիովին պետք ե հաղորդի վաճառքի գների իջեցումը՝ արդյունաբերության կողմից, ինչպես և գների մանրածախի ընթացքին հետեւի և, ըստ հնարա լորության, գները ցածը

մակարդակի վրա պահի։ Այս պայմաններում  
միայն մեզ կհաջողվի պահպանել ու բարձրա-  
ցնել բանվորի աշխատավարձի իրական նշանա-  
կությունը։ Այս հարցում մենք միայն վորոշ  
խմբագրություն ենք թույլ տալիս առանձին  
ապրանքների գները չափավորելու նկատմամբ։  
Առանձին ապրանքների վերադիր գներն Առե-  
արի Ժողովրդական Կոմատի մարմինների կող-  
մից կարդափորելու համար յեղած պրակտիկան  
շատ թերություններ ունի, վորոնց վերացման  
միջոցով կարող են վորոշ չափով ավելանալ ա-  
ռետրա-կազմակերպական ծախսերի նորմանե-  
րը։ Կատարյալ անհեթեթություն ե, որինակ՝  
տոկոսային տեսակետից միանման գնահատում-  
ների նորմաներ սահմանելը՝ սովորական, հա-  
սարակ և, որինակ, ասենք՝ կանացի մետաքսե-  
գուլպաների, թառափ ու սալմոն ձկների, Հաշ-  
տառիանի հարինդի, ոծանելիքների, շրթայուղի (губная помада), բանեցնելու սապոնի և այլ  
ապրանքների համար։ Այն ինչ՝ նման խեղա-  
թլուրումներ գոյություն ունեն։ Ահա հենց ի  
հաշիվ վերոհիշյալների վերացման, ի հաշիվ  
այնպիսի ապրանքների վերադիր գների շտկման,  
վորոնք մասսայական բանվորական սպառման  
գործում առանձին գեր չեն խաղում, կարող ե

բարձրացվել ամբողջ շրջանառությունից ստաց-  
վող միջին վերադիր գնահատման մակարդակը՝  
Միջին վերադիր գնահատումը հնարավորություն  
կտա բարձրացնելու նաև ծախսերի մակարդա-  
կը, լայն զանգվածների կողմից գործ ածվող  
ապրանքների գներն առանց բարձրացնելու:

Չենք բերած մակարդակի վրա իր գները  
պահելով՝ բանվորական կոռապերացիան պետք ե-  
աշխատի, վոր գներն ավելի վճռական ու կար-  
գավորիչ ազդեցություն անեն մասնավոր ա-  
ռևտրի գների վրա։ Մասնավոր առևտուրը մի  
շարք առևտրի ասպարեզներում, որինակ՝ բան-  
ջարեղենի առևտրի ասպարիզում, գները հսկա-  
յական չափով բարձրացնելու համար ոգտվում  
ե կոռապերացիայի ապրանքների պակասից, այս  
ասպարիզում կոռապերատիվ գործի անկազմա-  
կերպվածությունից։ Բանվորական կոռապերա-  
ցիան այս հանգամանքի վրա ուշք պետք ե-  
դարձնի և աշխատի վերացնել այն։

## ԵԼ ԱՎԵԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵՆՔ ՀԱՑ ԹԽԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՍԴԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Հաց թխելու և հասարակական սննդի աս-  
պարիզում բանվորական կոռապերացիան անցյալ  
տարիների լնթացքում քանակական վորոշ հա-

ջողություններ և ձեռք բերել, իսկ այս աշխատանքի վորակը բարձրացնելու համար շատ քիչ քան ե արել։ Մինչդեռ թխած հացի շուկան ընդգրկելու ասպարիզում բանվորական կոոպերացիան զգալի աճում ունի, հաց թխելու տեխնիկական բաղայի վերակառուցման ասպարիզում շատ քիչ հաջողություններ ե ունեցելց այդ տարիների ընթացքում ընդամենը մոտ յերկու տասնյակ նոր մեքենայացված հացագործարան կառուցելով։ Ճիշտ ե՝ մեքենայացված 20 հացագործարանը մեր պայմաններում ելի հենց մեծ նվաճում ե, սակայն, մեքենայացված ձեռվ հաց թխելու գործի զարգացման ասպարիզում յեղած իրական կարիքի համեմատությամբ—դեռ ևս շատ քիչ ե։ Նույնպես դեռևս պատճեն ուժադրություն չի դարձված թխվող նացի վորակի բարձրացման, վորի համար սպառողների կողմից արվող հաճախակի գանգատները միանգամայն իրավացի պետք ե համարել։ Թխվող հացի վորակը բարելավելու գործին մեծ ուշադրություն պետք ե դարձվի. կոոպերացիան պետք ե հաց թխելու գործը կիսատնայնագործական արհեստի խղճուկ մակարդակից այնպիսի բարձրության վրա դնի, վորը համապատասխանում ե գիտական-տեխնիկական մտքի նվաճումներին այս ասպարիզում։ Հացագործության ընդարձա-

կումն ու հացի վորակի բարելավումը, մանա-  
վանդ թելաղրվում են հացամթերման արդի կա-  
ցությամբ, վորը պահանջում է անցնել ընակչու-  
թյանը բացառապես թխած հաց մատակարարե-  
լու գործին։ Միաժամանակ հացամթերման վի-  
ճակը պահանջում է քաղաքների հացաբաշխման  
գործի այնպիսի մի դրույթ։ Վորով հացամթեր-  
ման ցանցի ընդարձակման և այն պլանաշափ-  
կերալով մատակարարելու գործը դրստելուն  
զուգընթաց, առաջին հերթին ու բավարար չա-  
փով բանվորական շրջաններն ապահովվեն, կա-  
րիք յեղած դեպքում սպառողների առանձին  
խմբակներ ամրացնելով վորոշ բաշխիչների։  
Այնուհետև՝ հաց բաց թողնելու ժամանակ ազ-  
դու միջոցներ պետք են ձեռք տռնվեն՝ թույլ չը-  
տալու, վոր հացը վոչ սպառողների կարիքի (ա-  
նասուններին կերակրելու և այլն) վրա ծախսվի։

Բանվորական կոոպերացիան ել ավելի նվա-  
ճումներ են ունեցել հասարակական սննդի աս-  
պարիզում։ Այս ընագավառում մենք ընդամենը  
Յ ֆաբրիկ-խոհանոց և տասնյակ ու կես խոշոր  
ճաշարաններ ունենք, իսկ մնացածը համարյա-  
հին տրակտիրում» ենք կատարում, — այսպես  
պետք են ընդունել այս գործի մակարդակը, յե-  
թե յելակետ ունենանք գոյություն ունեցող

ճաշարանների սարքավորումն ու հարմարողականությունը:

Հասարակական սննդի գործին բանվորական կոռպերացիան մինչև որս շատ քիչ ուշադրություն եւ դարձրել, մանավանդ, վոր այս գործը հաճախ վիասարեր եւ յեղել։ Այս գործը մեր յերկրում բարդ, նոր ու մեծ գործ եւ։ Սակայն, պետք եւ կազմակերպել այն։ Առանց հասարակական սննդի գործը լայն կերպով կազմակերպելու, մենք չենք կարող կուլտուրական սկզբունքներով բանվորական կենցաղի վերակազմություն կատարել։

Բանվորական կոռպերացիան այժմ որեկան մատ 500 հազար ճաշ եւ բաց թողնում,—մեր յերկրի համար այս թիվը մի չնշին թիվ եւ վերջինիս մեծացումը պետք եւ լինի բանվորական կոռպերացիայի անհետաձգելի անելիքը։

«Ժողոնունդ» ընկերության մեջ գլխավոր մասնակցություն ու ղեկավար ազգեցություն ունենալու գործը սպառողական կոռպերացիայի վրա հաստատելը, կոռպերացիայի վրա յեղնում հասարակական սննդի վողջ պատասխանատվությունը և յելակետ պետք եւ հանդիսանա ճաշարանների ու մեքենայացված ֆաբրիկ-խոհանոցների ցանցի ընդարձակման, առաջին հերթին՝ քան լորական կարևորագույն շրջաններում սննդի

եժանացման և այն, ըստ ուտելիքների բաղադրության ու վորակի, բանվոր սպառողի պահանջներին ու ճաշակին իսկապես հարժարեցնելու ավելի յեռանդուն աշխատանքների համար ու

## ԱՄՐԱՑՆԵՆՔ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՌԵՐՍՑԻԱՅԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Ինքնըստինքյան պարզ ե, վոր կոռպերատիվ աշխատանքի գլխավոր ճյուղերի բարելավման գործի հետ կապ ունեցող բոլոր վերոհիշյալ խնդիրներն առանձին սրությամբ բանվորական կոռպերացիայի առաջ են դնում ֆինանսական պրոբլեմը։ Թե՛ հիմնական շինարարության խնդիրները, թե՛ բանվորական բյուջեն ընդդրկելու գործի մեծացումն ամբողջությամբ դեմ են առնում բանվորական կոռպերացիայի ֆինանսական բազայի ընդարձակման ու ամրապնդման անհրաժեշտության։

Սակայն, յեթե նունիսկ հատուկ խնդիրներն ել չլինեյին, մենք դարձյալ պետք ե խռոս տովանեյինք, վոր չի կարելի կոռպերատիվ տնտեսություն կառուցել, հենվելով միմիայն փոխառության միջոցների վրա։

Զիսուելով դեռ այն մասին, վոր բանկային վարկերի լայն չափով ողտագործումը թանդար.

նում և աշխատանքը, Փինանսավորման այս աղբյուրն ինքնին, իր անկայունության պատճառով, չի ապահովում առետրական աշխատանքի կայունությունը։ Այս բանն առանձնապես առարկայական կերպով յերեսում և անցյալ յերկու տարվա որինակից, այն տարիների, վորոնց ընթացքում բանվորական կոռագերացիան, բանկային ու ապրանքային միջոցների կրճատման հանդիպելով (ամբողջ սպառովստեմից հանված եր մոտ 100 միլ. ոռուր.), քիչ չի ապրել ֆինանսական այնպիսի դժվարություններ, վորոնք քիչ եր մնացել կատաստրոֆի յենթարկեցին մի շարք խոշոր կոռագերատիմներ։

Վերոհիշյալ նկատառումները չեն նշանակում, թե պետք է հրաժարվել բանկային ու այլ կազմակերպությունների վարկերից ոգտվելուց։ Բանվորական կոռագերացիան հնարավորություն չունի հրաժարվելու այդ վարկերից։ Ընդհակառակը, շրջանառությունների հսկայական չափով աճելու, ծանրադնաց ապրանքների—այս թվում նաև գյուղատնտեսական մթերքների—տեսակարար կշիռը շրջանառությունների մեջ ավելանալով, հիմնական շինարարության զարգացումով՝ բանվորական կոռագերացիան իրավունք ունի հուսալու վոչ միայն բանկային ու ապրանքային վարկերի ներկա չափերն իր վրա

հաստատելու, այլև այս վարկերը վորոշ չափով  
ավելացնելու: Վերոհիշյալ նկատառութերը մեջ  
բերեցինք ապացուցելու սեփական միջոցների  
ուժեղ կերպով կուտակվելու անհրաժեշտությու-  
նը, այն միջոցների, վոր կոռազերատիվ ֆինանս-  
ների մեջ ներկայումս շատ փոքր տեսակարար  
էշիո ունեն:

Սեփական միջոցների ավելացումը յերկու  
հանապարհով ակետք ե ընթանա. բնակչության  
նյութական մասնակցությունն ընդարձակելու  
միջոցով՝ կոռազերացիայի կապիտալներ (փայեր,  
ավանդներ) ստեղծելու ասպարիզում ու կու-  
տակման նորմալ տոկոսն ազանովելու միջոցով:

Ի՞նչ արդյունքներ ե ստացել այս ասպա-  
րիզում բանվորական կոռազերացիան անցյալ տա-  
րիների ընթացքում:

Մի տարի առաջ, առ 1.ն հոկտեմբերի  
1927 թ., 1 անդամ-փայտիրոջ միջին փայն  
ամբողջ բանվորական կոռազերացիայում 6 ռուբ.  
05 կ. եր միայն, իսկ ներկա տնտեսական տար-  
վա սկզբին կազմում եր 9 ռ. 10 կ., այսինքն՝  
մի տարում  $50^{\circ}/0$ -ով ավելացել ե: Համաձայն  
բանվորական կոռազերացիայի սիստեմի, մի տար-  
վա ընթացքում նորից հավաքված ե յեղել մո-  
տավորապես ընդամենը 37 միլիոն ռուբլի:

Բանվորական խոշոր կոռազերատիվներում,

վորոնք կենտրանսեկցիայի կողմից են սպասարկվում, 1 փայտիրոջ միջին փայն առ 1 նոհոկանմբ. 1928թ. նույնիսկ 10 ոռւբլուց բարձր ե, իսկ այդ կոռպերատիվների գորոշ մասերում արդեն հասել ե արդի սահմանյալ չափին—15 ոռւբլու:

Այս թվերը ցույց են տալիս, վոր, չնայած նոր անդամների հսկայական հոսանքին (մի բան, վոր նպաստում ե միջին փայի մակարդակն իջեցնելուն, վորովհետև նոր անդամները միանգամից լրիվ փայ չեն մուծում), բանվորական կոռպերացիան միջին փայի չափը վոչ միայն նախկին ծավալով ե պահպանել, այլև դդայի չափով ավելացրել ե. մի. տարվա մեջ (բոլոր նախորդ տարիների համեմատությամբ) հավաքելով փայավճարների մի ռեկորդային գումարը Ռւբիշ խոսքով՝ բացարձակ չափերով՝ բանվորական կոռպերացիան այս ասպարիզում ել մեծ հաջողություններ ե ձեռք բերել: Սակայն, յեթե հաշվի առնելու լինենք սեփական միջոցների տեսակարար կշռի խիստ անբավարար լինելը ու կոռպերացիայի հսկայական կարիքը՝ շրջանառության միջոցների նկատմամբ ընդհանրապես, ապա ձեռք բերած հաջողությունները բավարար համարել չի կարելի: Ընթացիկ տնտեսական տարվա ընթացքում բանվորական կոռպերացիան

պետք ե աշխատի ձեռք բերել բնակչության  
ել ավելի մեծ մասնակցությունը՝ կոռագերատիվ  
փայեր ստեղծելու դործում։ Այս տարվա ըն-  
թացքում բանվորական կոռագերացիայի միջին  
փայը պետք ե ավելացվի վոչ պակաս, քան 5  
ոուրլով, վորպեսզի 1928—29 տ. տարում մի-  
ջին թվով մեկ փայատիբոջ փայը 14 ո. 50 կ.  
լինի։

Այս խնդրի կատարումը պետք ե ապահով-  
վի վոչ միայն փայագճարներից մնացած պարտ-  
քերի սաստիկ հավաքումով, այլև նույնիսկ փա-  
յատերերի առանձին խմբակների վաստակի չա-  
փերը հաշվի առնելով, փայ հատկացնելու նոր  
սիստեմին՝ այսպես ասած՝ դիֆերենցիալ փայի  
անցնելով։ Այս սիստեմին անցնելը հնարավո-  
րություն կտա՝ ցածր աշխատավարձ ստացող  
բանվորների ու ծառայողների փայը շատ չբարձ-  
րացնելով՝ բարձր կատեգորիայի աշխատավարձ  
ստացող բանվորների ու ծառայողների փայն  
զգալի կերպով բարձրացնել։ Փայի տյսպիսի մի  
դիֆերենցիացիա յենթադրվում է, աշխատավար-  
ձի համեմատությամբ, սահմանված չու փի մի  
քանի (4—5) չափ մտցնելու ձևով։

Փոքը հաջողություններ ե ունեցել բանվո-  
րական կոռագերացիան ավանդների զարգացման  
ասպարիզում, կարծես, իրբե սովորություն, այս

աշխատանքը կոռպերատիվների մեծ մասւմ գեսես ծավալված չի։ Այնինչ առանձին կոռպերատիվներում ավանդների գործառնությունները շատ ու շատ շոշափելի արդյունքներ են տվել արդեն. այնտեղ ավանդների գումարը մի քանի հարյուր հազար ոուրլու յե հասնում ամեն մի կազմակերպության համար։ Հետագայում այս գործին ևս մեծ ուշադրություն պետք է դարձնել։

Բանվորական կոռպերացիայի ֆինանսական պրոբլեմն ու, մասնավորապես, սեփական միջոցներն ավելացնելու պրոբլեմը բացառիկ տեղ պետք է գրավի բոլոր այլ խնդիրների մեջ, վորոնք կոռպերացիայի բազմակողմանի աշխատանքներից են բղխում, ու պետք է սրվի առաջիկա հաշվետունախընտրական կամպանիայի ընթացքում։

## ԴԵՊԻ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԿՈՌԵՐԱՍԻՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ

Կոռպերացիայի առելորատնտեսական աշխատանքի զարգացմանն ու ամբապնդմանը զուգընթաց, պետք է ձեռք բերել հասարակական-մասսայական սկզբունքների հետագա ուժեղացում՝ կոռպերացիայի աշխատանքների ասպա-

ըիզում և, առաջին հերթին՝ բանվորական լայն գանգվածների կոռպերացման հետագա ընդզըթ կում։ Առ. 1-ն հոկտեմբերի 1928 թ. բանվորական կոռպերացիան մոտ 7.700 հազար փայտեր ուներ, կոռպերացիան ընդզըթ կում ե ամբողջ մեծահասակ բանվոր բնակչության մոտ 40% ու քաղաքներում ապրող արհմիությունների բոլոր անդամների 70% ից ավելին։ Գլխավոր արտադրական միություններում (մետաղագործներ, լեռնագործներ, մանածագործներ ու քիմիկոսներ) կոռպերացիան տոկոսն ել ավելի յէ, հասնելով մինչև 80—85% ի։

1928—29 թ. բանվորական կոռպերացիան պատրաստվում է 2 միլ. մարդ կոռպերացնել, կոռպերացիայի անդամների թիվը հասցնելով մինչև 9,7 միլիոնի։ Ըստ անդամների քանակի և ըստ շրջանառությունների, խորհրդային բանվորական կոռպերացիան իրենից շատ հետ ե թողել բանվորական կոռպերացիայի այնպիսի հզոր սիստեմներ, ինչպիսին անգլիականն ու գերմանականն են։

Չնայած յերկրի արդյունաբերական արտադրության մեջ զբաղված բանվորների անընդհատ աճման, բանվորական կոռպերացիան վոչ միայն այս աճումն ընդգրկելու գործում հետ չի նում, ինչպես յերկու տարի առաջ եր այդ լի-

նում, այլև գերազանցում եւ այն- բանվորների  
կոռպերացման 0/0.ը բարձրանում եւ:

Ի՞նչ կասկած, վոր հետագա կոռպերացումը  
խոշոր դժվարությունների յեւ հանդիպելու, քա-  
նի վոր հետ մնացող արհմիությունների գծով  
եւնթանալու. գերջիններիս մեջ են այնպիսի  
միություններ, ինչպիսիք են՝ Գեղաշխի, Ժող-  
ոննդի, Հողանտառ, Լուսաշխի, կառուցողների  
միությունները, վորոնց անդամները մեծ դժվա-  
րությամբ են կոռպերացման յենթարկվում:

Սակայն, բոլոր այս դժվարությունները  
կոռպերատիվ ապարատը միայն պետք եւ մղեն  
գեղի եներգիայի ավելի զարգացում կոռպե-  
րացման հարցերի շուրջը:

Առանձին ուշադրություն պետք եւ դարձնել  
կին բանվորների ու տնտեսուհիների, ինչպես և  
յերիտասարդ բանվորության կոռպերացմանը:  
Այս դործին մինչև այժմ մենք բավականաշակ  
ուշադրություն չենք դարձրել: Ընտանիքի յերկ-  
րորդ՝ սովորաբար տան կենցաղի ու տնտեսու-  
թյան հարցերին մոտիկ կանգնած՝ անդամների  
կոռպերացումը նույնպես կարող եւ աշխուժաց-  
նել անդամի կոռպերատիվ ինքնազործունեցու-  
թյունը:

Կոռպերացման հաջողությունը կատարելա-  
պես կախված եւ բնակչության նյութական շահ-

հագրգովածությունից՝ կոռպերացիայի աշխատանքների մեջ։ Հետագայում պետք ե ուժեղացնել այս շահագրգովածությունը։ Առաջին հերթին պետք ե ուժեղացնել փայտիրոջ շահագրգովածությունը՝ նրան դեֆիցիտային ապրանքներով սպասարկելու միջոցով։ Այնուհետև՝ պետք ե ուժեղացնել մասսաների ամենորյա պահանջների սպասարկման հետ կազ ունեցող կուլտուր-կենցաղային աշխատանքները։

Պետք ե պակսեցնել ագիտացիայի չափը կուլտուրայի ու նոր կենցաղի համար և ավելի շուտ կիրառել գործնական միջոցներ՝ իսկապես կուլտուրական կենցաղ մտցնելու համար։ Դասընթացներ, խմբակներ, դասախոսություններ, եքսկուրսիաներ, գրադարաններ, ուսուցիչներ, գրքի աշխատանք, — ահավասիկ մաքսիմալ գարգացման կարոտ կուլտուրական աշխատանքի կոնկրետ ձևերի ցանկը։ Արհմիությունների նետ համերաշխ կերպով ու բանվորական ակումբի վրա նենվելով՝ պետք է առաջվա պես փայտերերի կուլտուրական սպասարկում մրժացնել։

Կենցաղային աշխատանքի ասպարիզում պետք ե մանկական մասուրների, հրապարակների ու պարտեզների ճանապարհ բռնել և տնտեսուհի կնոջն ոջախի և տաշտի մաշող աշխա-

տանքից աղատող՝ կոռպերատիվ լվացքատների՝  
կարկատանների ու կենցաղային այլ ձեռնար-  
կությունների զարգացման ճանապարհ բռնելը  
Կուլտուր կենցաղային նախամիջների կիրա-  
ռումը սերտ կապ պետք եւ ունենա արհմիու-  
թյունների ու ընակարանային կոռպերացիային  
հետ, գոր, ինչպես և սպառկոռպերացիան, կեն-  
ցաղի հարցերի նկատմամբ, զգալի չափով շահա-  
դրդովածություն պետք եւ ցույց տա:

Կուլտուր կենցաղային աշխատանքներն ու-  
ժեղացնելու գործի մեջ պետք եւ մտցնել, այս-  
պես առած՝ դնման պրեմիոն, վոր իբրև փայտ-  
տիրոջը պրեմիա տալու անհատական ձեւ, ինք-  
նին վերացել եւ Արդյունքից ոգտվելու նախկին-  
ձեր պետք եւ փոխարինվի նոր ձեւերով— փայտ-  
տերերի կոլլեկտիվ շահադրդովածությունն ու-  
ժեղացնելու ընդունակ ձեռնարկումներով։

Կոռպերատիվ աշխատանքների հաջողու-  
թյունը կախված պետք եւ լինի հասարակական-  
մասսայական աշխատանքների ընդարձակումից՝  
Բանվորական կոռպերացիայի վողջ գործունեյու-  
թյունը պետք եւ հիմնավորվի հասարակական-  
լայն բազայի վրա։ Ամեն մի ակտիվիստ, ամեն-  
մի փայտեր բանվորական կոռպերացիայի գոր-  
ծունեյության մեջ ամենակարիվ մասնակցու-  
թյունը պետք եւ ունենա։ Հենվելով միայն կու-

ոպերացված բանվորական զանդվածների գործունեյության վրա, իր աշխատանքները կատարելով բանվորական զանդվածների յեռանդուն հսկողությամբ՝ բանվորական կոռպերացիան կը կարողանա վոչ միայն ամրապնդել, այլև բազմապատկել իր հաջողությունները:

Կոռպերատիվ փայտերն ինքնիրեն վոչ թե գնացողի, այլ ծախողի տեղ պետք ե դնի: Մեր անելիքն այն ե, վոր նպաստենք այս հասկացողությունը կոռպերացված հոծ զանդվածների մեջ մտցնելու գործին:

Ի՞նչ բան կարող ե ապահովել հասարակական մասսայական աշխատանքի հաջողությունները:

Ամենից առաջ՝ կոռպերատիվ ապարատի հրապարակային լայն հաշվետվությունը կոռպերացված մասսաներին:

Այնուհետև՝ ամենալայն ինքնաքննադատության զարդացումը և, ներքեից—մասսաների բանվորների ու ծառայողների կողմից յեղած—բանվորական կոռպերացիայի վողջ գործունեյության քննադատության զարդացումը:

Եեվ վերջապես՝ ակտիվի ու փայտիրոջ հետ ունեցած աշխատանքի հագեցումը նրանց շահերին մոտիկ ու կոնկրետ բովանդակությամբ:

Ուշադիր ու գգայուն վերաբերմունք դեպի

բոլոր այն առաջարկները, վոր փայտերերի  
կողմից են դնում: Կերջիններիցս ոգտակարնե-  
րի արագ նիրառումը կյանքում ու փայտերե-  
րի ինֆարմացիայի գրույթը իրենց առաջարկ-  
ների կիրառման մասին, բացառիկ վերաբեր-  
մբ նքի ատեղծում՝ դեպի «բողոքների զիրքը»,  
արագ հակադգում այս գրքում զետեղված բո-  
ղոքներին, — ահավասիկ այն ձեռնարկումները:  
վորոնք ապահովելու յեն կոռպերատիվ հասարա-  
կայնության հետագա զարգացումը:

Չպետք ե մոռանանք, վոր կոռպերատիվ  
հասարակայնության գլխավոր լծակը կոռպերա-  
տիվ ակտիվն ե՝ լիազորների ինստիտուտը, խա-  
նութային հանձնաժողովները, արտադրության  
կոռպերատիվը: Ուստի կոռպերատիվ հասարա-  
կայնության աշխատացումն ել ամենից առաջ  
կալված ե ակտիվի գործոն մասնակցությունից  
կաղմակերպությունների աշխատանքներին ու  
մասսաների հետ իր կապերը դրստելուց: Պետք  
ե ապահովել լիազորների ժողովների իրական  
մասնակցությունը կոռպերատիվների գործու-  
նեյությանն ուղղություն տալու ասպարիզում,  
ինչպես և խանութային հանձնաժողովների մաս-  
նակցությունը խանութների աշխատանքներին  
հետեւելու և այն բարելավելու ասպարիզում:  
Պետք ե զգալի չափով ընդլայնել խանութային

հանձնաժողովներից ցանցը, ուժեղացնել դեկա-  
վարությունը նրանց աշխատանքների վրա, աշ-  
խուժացնել լիազորների սեկցիաների գործու-  
նեյությունը:

Չեռնարկությունների ու հիմնարկություն-  
ների ինքնազործունյա ակտիվը պետք ե միա-  
վորվի կոռպբյուրոնների մեջ, վորոնք անմիջա-  
կան դեկավարություն են ստանում կոռպերա-  
տիվներից և իրենց աշխատանքը (կոռպերացում,  
փայերի ու ավանդների հավաքում, կազմակեր-  
պական մասսայական աշխատանքներ և այլն)  
կապում են արհմարմինների հետ:

Այս բանին զուգընթաց պետք ե ուշադրու-  
թյուն դարձնել կազմբաժինների աշխատանքնե-  
րի ուժեղացման վրա, մասնավորապես, հրահանգ-  
չին՝ կոռպերատիվ ակտիվին ու մասսաներին  
մոտեցնելու վրա: Հրահանգիչը պետք ե ապրի  
մասսաների տրամադրությամբ և այս տրամա-  
դրությունները կոռպերատիվ ապարատին հա-  
ղորդի:

Պետք ե փոխել սառը վերաբերմունքը դե-  
պի կազմակերպական աշխատանքը: Կազմակեր-  
պական մասսայական աշխատանքը պետք ե նը-  
մատի առնվի, ինչպես ձեռնարկումների շղթայի  
կարևորագույն ողակ. այն ձեռնարկումների,  
վոր կոչված են կոռպերատիվ ապարատը վերա-

ծելու իսկապես հասարակական կաղմակերպության։

Առանձին ուշադրություն ովետք եւ դարձնել խանութային հանձնաժողովների կանոնավորության վրա, ձեռնարկությունների ակտիվից շուտափույթ ղեկավարություն կաղմակերպելու վրա։ Բանվոր-սպառողների ինքնակազմակերպման այս սկզբնական քջիջներն այն ողակը պետք եւ հանդիսանան, վորի ոգնությամբ մենք, ոգտվելով բանվորի իրեն սպառարկող «սպառիանութի» տարրական հարցերով հետաքրքրվելուց, նրան ակտիվ կերպով ներդրավում ենք ամբողջական կոռպերատիվ շինարարության մեջ, և այնտեղ բանվորական ազգեցության, բանվորական ակտիվի թափանցում են ձեռք բերում։

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր հետապա աշխատանքներին անշուշտ ընթացակցելու յեն բացառիկ դժվարություններ, Վերջիններիս հաղթահարումը բանվորական կոռպերացիայից պահանջելու յե մեծագույն լարվածություն, բայլշեկույան յերկաթե դիսցիպլինա, ճկուն մանյովրներ անելու շնորհք, իր աշխատանքը կուսակցության ընդհանուր քաղաքական դիրեկտիվների հետ զուգորդելու, ամեն մը

պանիկյորություն կոռապերատիվ շարքերից վճռականորեն վտարելու, կոռապապարատը խորթ, քայքայված տարրերից մաքրելու, կոռապերատիվ կենտրոնների ղեկավարությունը դավառների վրա ուժեղացնելու շնորհք:

Վերոհիշյալ հաջողությունները բանվորական կոռապերացիան ձեռք ե բերել իրրև սպառողական կոռապերացիայի միասնական սիստեմի անկապտելի բաղադրիչ մաս. սիստեմի միասնականությունը հետագայում ել պետք ե ամեն կերպ պահպանվի: Բանվորական կոռապերացիայի միասնական սիստեմի ներսում միայն քաղաքի Բանկոպի սեկտորը (ճյուղը) կարող ե իրականացնել բանվորի ու գյուղացու միությունն ամբացնելու մեծ խնդիրները: Այս սկզբունքային գիծն աղավաղելու ամեն մի փորձ վճռական հակահարվածի պետք ե հանդիպի:

Իր հաջողությունների համար բանվորական կոռապերացիան պարտական ե այն ընդարձակ ոժանդակության, վոր հանդիպել ե խորհրդային իշխանության և արհմիութենական կազմակերպությունների կողմից. գործնական կապի ամբացումը վերջիններիս հետ,—մոտ ժամանակներս կայացած արհմիությունների VIII համագումարի վորոշումներն ապահովում են այս,—

կնագաստի ել ավելի մեծ հաջողություններ ձեռք  
բերելուն:

Կոմունիստական կուսակցության լենինյան  
պանծալի ղեկավարությամբ, հետևելով Վ. Ի.  
Լենինի պատգամներին՝ բանվորական կոռպե-  
րացիան ձեռք կբերի այս հաջողությունները:

Բանվորական կոռպերացիայի ընդհանութ-  
երթական խնդիրների լույսի տակ, առաջիկա-  
հաշվետունախըլնտրական կամպանիայի ժամա-  
նակ, պետք եւ պարզաբանվեն տեղական ամեն-  
մի քաղբանկոսպի կարիքներն ու զարգացման  
հեռանկարները: Կոռպերացված ամեն մի բան-  
վոր ու բանվորուհի, ամեն մի փայտեր պետք  
եւ պարզ պատկերացնի կոռպերատիվ շինարարու-  
թյան արդյունքներն ու հետազառողիները, Բացե-  
րի ամենալայն քննադատություն, հաջողություն-  
ների ու թերությունների լուրջ գնահատություն,  
բանվորական զանգվածների կոլեկտիվ կամքի  
ու մտքի լայն մասնակցություն դժվարություն-  
ներն ու բացերը հաղթահարելու գործում,—ա-  
հավասիկ այն ուղիները, վորոնցով պետք եւ ըն-  
թանա բազմամիլիոն փայտերերի բանակի զո-  
րակոչը մոտալուտ կամպանիայի ընթացքում:

Ել ավելի մոտենանք բանվորական զանգ-  
վածներին:

Բանվորների լայն ներգրավում կոռպերա-

տիվ մարմինների վարիչների պաշտոնի ու ապարատի մեջ:

Զգայուն և ուշադիր վերաբերմունք դեպի բանվորական զանգվածների պահանջները:

Մեր աշխատանքի ասպարիգում յեղած թերությունների լայն քննադատություն:


Բանվորական զանգվածների գործնական կոնտրոլի ռւժեղացման:

Բանվորների սպասարկման դործի վորակի լավացման:

Մեծ ճշունություն ու ձեռներեցություն՝ դժվարություններն ու թերությունները հաղթահարելու գործում:


Գործնական կապի հետազա ամրացման արհմիությունների հետ:


Ահավասիկ այն զիխավոր լոգու նզները, վարոնց տակ պետք ե ընթանա կամպանիան:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Աշխատանքի արդյունքներից . . . . .	3
Դարեռագույն խնդիրը բանվորական բյու- ջելի լրիվ ընդգրկումն ե . . . . .	17
Սպասարկման գործի վորակ, հիմնական շինարա- րություն, ռացիոնալացում . . . . .	27
Սպասարկության արժեքը . . . . .	50
Էլ ավելի ուշադրություն զարձնենք հաց թխելու և հասարակական սննդի հարցերին . . . . .	57
Ամրացնենք բանվորական կոռպերացիայի ֆի- նանսները . . . . .	61
Դեպի նոր աշխատանք՝ կոռպերատիվ հասարա- կայնության միջոցով . . . . .	66
Յեղրակացություն . . . . .	74





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038993

(164)

ԳԻՒԸ 20 ԿՈԹ.

